

PARLIAMENT MONITORING

02.02.2015 - 02.07.2015

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

5-րդ ԳՈՒՄԱՐՈՒՄ | 7-րդ ՆՍՏԱՇՐՋԱՆ | 6-րդ ԶԵԿՈՒՅՑ



ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

5-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄ | 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ | 6-ՐԴ ԶԵԿՈՒՅՑ
02.02.2015 - 02.07.2015

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N 19182: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետներին և դիրքորոշումներին:

ԵՐԵՎԱՆ 2015

«Մանդատ» ՀԿ-ն ներկայացնում է 5-րդ գումարման Ազգային ժողովի 7-րդ նստաշրջանի գործունեության դիտարկման արդյունքները: Ամփոփումը կազմվել է լրագրողական դիտարկումների, փորձագիտական վերլուծությունների և parliamentmonitoring.am կայքի վիճակագրական ծրագրի տվյալների համադրմամբ:

Զեկույցը կազմված է 5 բաժնից: Առաջին բաժնում ամփոփվել են 7-րդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանի գործունեության ընդհանուր միտումներն ու ցուցանիշները, ներկայացվել են ԱԺ խմբակցությունների օրենսդրական նախաձեռնությունների, ակտիվության մասին տվյալներ:

«Օրենսդրություն» բաժնում ներառվել են գարնանային նստաշրջանի ընթացքում ընդունված օրենսդրական փաթեթերից մի քանիսի դիտարկման արդյունքները: «ԱԺ վերահսկողությունը» բաժնում անդրադարձ է կատարվել խորհրդարանի վերահսկողական գործառնություն: Դիտարկվել են նստաշրջանի ընթացքում ներկայացված հաղորդում-հաշվետվությունները՝ օրենքով սահմանված ընթացակարգերի և խորհրդարանական քննարկումների արդյունավետության տեսանկյունից: Ամփոփվել են նաև 5-րդ գումարման Ազգային ժողովում իր գործունեությունը սկսած էթիկայի հանձնաժողովի աշխատանքի արդյունքները, առաջին անգամ անդրադարձ է կատարվել խորհրդարանական լսումների ինստիտուտին՝ դրանց արդյունավետության և ազդեցության տեսանկյունից:

Զեկույցի վերջին՝ «Հավելված» բաժնում փորձագիտական վերլուծություններ են:

Փորձագիտական խումբ

Գոռ Աբրահամյան
Արփակ Բյուրումյան

Նստաշրջանը թվերով	4
Աժ խմբակցություններ / օրենսդրական նախաձեռնություններ, ակտիվություն /	8
Աժ վերահսկողությունը	18
Աժ օրենսդրական գործունեությունը	23
Խորհրդարանական լսումներ	35
Աժ էթիկայի հանձնաժողովը	37
Փորձագիտական վերլուծություններ Հավելված	40

ԱԺ 5-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄ, 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

5-րդ գումարման Ազգային ժողովի 7-րդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 7 քառօրյա և 3 արտահերթ նիստ: Նստաշրջանի ավարտից հետո հրավիրվել է ևս 3 արտահերթ նստաշրջան. արտահերթ բոլոր նիստերի և նստաշրջանների նախաձեռնությունը եղել է կառավարությանը:

Ընդունվել է 112 օրենք (53 օրենսդրական նախաձեռնություն), որոնցից միայն 6-ն են «մայր» օրենքներ, 106-ը փոփոխություններ ու լրացումներ են գործող օրենքներում: Ընդունված օրենքներից 10-ի հեղինակը ԱԺ պարզամավորներն են, 102-ինը՝ ՀՀ կառավարությունը: Օրենքների կեսից ավելին՝ 61-ը, ընդունվել է արտահերթ նիստերի (19) և նստաշրջանների (42) ընթացքում:

Ընդունված օրենքների գերակշիռ մասը (45) վերաբերում է պետաիրավական ոլորտին: 23 փոփոխություն է կատարվել տնտեսական, 8՝ սոցիալական, 6՝ պաշտպանության ոլորտների օրենսդրության մեջ:

7-րդ նստաշրջանի ընթացքում ԱԺ-ն վավերացրել է 17 միջազգային պայմանագիր, ընդունել է 2 հայտարարություն, հաստատել է ՎՊ 2015թ. գործունեության ծրագիրը, 2014թ. պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, ի գիտություն է ընդունել ՀԾԿՀ և ՏՄՊՊՀ 2015թ. գործունեության տարեկան ծրագրերը, ՀՀ դատախազության 2014թ. գործունեության մասին հաղորդումը, ՀՀ զազամարտկարարման համակարգի գործունեությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը, ինչպես նաև ՎՊ-ի և ՀՌԱՀ-ի 2013թ. հաշվետվությունները:

Մերժվել է 1 նախաձեռնություն՝ ՀԱԿ և ԲՀԿ խմբակցությունների պարզամավորների հեղինակած հայտարարության նախագիծը ՀՀ-ում առաջացած կառավարման ճգնաժամի մասին:

ԱԺ 7-րդ նստաշրջանի օրակարգում ընդգրկված մոտ 250 հարց չի քննարկվել, շրջանառության մեջ դրված մոտ 200 նախագիծ նստաշրջանի օրակարգ չի ընդգրկվել:

ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՈՒՇԱԳՐԱԿ ՓԱՍՏԵՐԸ


Օրենսդրություն

- ◆ Շարունակելով ձևավորված ավանդույթը՝ խորհրդարանն արտահերթ նիստերի և նստաշրջանների ընթացքում ընդունել է ավելի շատ օրենք, քան ողջ հերթական նստաշրջանի ընթացքում. 112 օրենքից 61-ն ընդունվել է արտահերթ նիստերում ու նստաշրջաններում:
- ◆ Նստաշրջանի ընթացքում վավերացված համաձայնագրերի գերակշիռ մասը վարկային համաձայնագրեր են: Հունիսին և հուլիսին հրավիրված արտահերթ նստաշրջանների ընթացքում վավերացված 5 համաձայնագրերի ընդհանուր գումարը 600 մլն դոլարից ավելի է:

- ◆ Խորհրդարանը փոփոխել է «Պետական պարտքի մասին» օրենքը. պետական պարտք հասկացությունը վերաձևակերպել է որպես կառավարության պարտք՝ ստեղծելով լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելու հնարավորություն առանց օրենսդրությամբ նախատեսված սահմանաչափերը խախտելու:
- ◆ 7-րդ նստաշրջանում առաջին անգամ ՀՀ գլխավոր դատախազը ԱԺ-ում հանդես է եկել դատախազության նախորդ տարվա գործունեության մասին հաղորդմամբ:
- ◆ Նստաշրջանի ընթացքում քննարկվել և քվեարկությամբ մերժվել է միայն 1 նախագիծ՝ ՀԱԿ և ԲՀԿ խմբակցությունների հեղինակած հայտարարության նախագիծը ՀՀ-ում կառավարման ճգնաժամի մասին:
- ◆ Ընդդիմադիր ՀԱԿ, «Ժառանգություն» և ՕԵԿ խմբակցությունների պարզամավորների հեղինակած 7 նախագծի ընդգրկումը 7-րդ նստաշրջանի օրակարգ հերթագծվել է մինչև 1 տարով, 2-ինը՝ քվեարկությամբ մերժվել:

Հանձնաժողովներ

- ◆ Նստաշրջանի ընթացքում ԱԺ 12 մշտական հանձնաժողովներից առավելագույն թվով նիստեր (10) հրավիրել են 3-ը՝ արտաքին, պետաիրավական և տնտեսական հարցերի հանձնաժողովները: 3 հանձնաժողով՝ առողջապահության, գյուղատնտեսական և եվրաինտեգրման հարցերի, նստաշրջանի ընթացքում ընդամենը 1-ական նիստ են հրավիրել:
- ◆ ԱԺ 12 մշտական հանձնաժողովներից 4-ը՝ սոցիալական, գիտության և կրթության, գյուղատնտեսական և բնապահպանական, մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովները, նստաշրջանի ընթացքում ոչ մի անգամ չի կազմակերպել խորհրդարանական լսումներ՝ փաստացի խախտելով ԱԺ կանոնակարգի պահանջը:
- ◆ 7-րդ նստաշրջանում էթիկայի հանձնաժողովը գրանցել է աննախադեպ պարապուրդի ռեկորդային ցուցանիշ. ոչ մի դիմում չի ստացվել, նիստ չի հրավիրել, որոշում չի կայացրել:
- ◆ 1-ամյա ուսումնասիրության արդյունքներն է ամփոփել և խորհրդարանին եզրակացություն ներկայացրել գազամատակարարման ոլորտի խնդիրներն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովը: Եզրակացության մեջ տեղ գրած առաջարկների իրականացման մշտադիտարկման գործառույթը ԱԺ որոշմամբ տրվել է տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին:




- Արդար - 86.2%
- Բացակա - 9.5%
- Չի քվեարկել - 3.1%
- Դեմ - 1.1%
- Ձեռնպահ - 0.2%

Հանրապետական խմբակցության քվեարկության պատկերը

■ 5-րդ գումարման Ազգային ժողովի 7-րդ նստաշրջանում խորհրդարանական մեծամասնությունը՝ Հանրապետական խմբակցությունը, պահպանել է քվեարկությունների տրամաբանությունը: Դեմ քվեարկությունները, ինչպես նախորդ նստաշրջանում, 1 տոկոսի շրջակայքում են և վերաբերում են բացառապես ընդդիմության նախաձեռնություններին:

■ Ըստ հարցերի և ելույթների վիճակագրության՝ դիտարկված ժամանակահատվածում ամենաբարձր ցուցանիշն արձանագրել են Հանրապետական (217 հարց ու ելույթ) և ՕԵԿ (214 հարց ու ելույթ) խմբակցությունները, ամենացածրը ՀՅԴ արդյունքն է (47 հարց ու ելույթ): Սակայն ակտիվության ցուցանիշը խմբակցությունների պարզամավորների քանակի հետ համադրելիս ստացվում է, որ ԱԺ ամենամեծ խմբակցության՝ ՀՀԿ-ի պարզամավորները միջին հաշվով հարց փվել կամ ելույթ ունեցել են 3 անգամ, ԲՀԿ-ն՝ 7, ՀՅԴ-ն՝ 9, ՀԱԿ-ը՝ 19, «Ժառանգությունը»՝ 20, իսկ ՕԵԿ-ը՝ 40 անգամ:

ԱԺ խմբակցությունների ակտիվությունը



■ Նախորդ նստաշրջանի համեմատ աճել է ամբողջ խորհրդարանի ակտիվությունը. 7-րդ նստաշրջանի ընթացքում օրենսդրական քննարկումների ժամանակ ընդհանուր առմամբ հնչել է 877 հարց ու ելույթ, նախորդում այս ցուցանիշը 521 էր:

■ Փոխարենը մեծացել է «լռակյաց» պարզամավորների թիվը. օրինագծերի քննարկմանը չի մասնակցել 131 պարզամավորից 74-ը՝ նախորդ նստաշրջանի 67-ի համեմատ: ՀՀԿ-ում 70 պարզամավորից հարց չի փվել ու ելույթ չի ունեցել 42-ը, ԲՀԿ-ում 33-ից 25-ը:

■ Ըստ ParliamentMonitoring.am-ի վիճակագրության՝ 7-րդ նստաշրջանում ամենաշատ կողմ քվեարկած խմբակցությունը ՀՀԿ-ն է, ամենաշատ դեմ քվեարկածը՝ «Ժառանգությունը», ամենաշատ ձեռնպահը՝ ՀՅԴ-ն, ամենաշատ բացակայածն ու չքվեարկածը՝ ԲՀԿ-ն:


■ 7-րդ նստաշրջանի ամենաշատ բացակայած պարզամավորը Գագիկ Ծառուկյանն է: Ամենաշատը կողմ է քվեարկել ՀՀԿ խմբակցության պարզամավոր Մնացական Մնացականյանը, դեմ ՀԱԿ-ից Նիկոլ Փաշինյանը, ձեռնպահ՝ ՀՅԴ-ից Աղվան Վարդանյանը: Հարցերի և ելույթների քանակով ամենաակտիվը ՕԵԿ խմբակցության ղեկավար Հեղինե Բիշարյանն է:

■ ՀՅԴ խմբակցության պարզամավոր Արծվիկ Մինասյանը շարունակում է գլխավորել 5-րդ գումարման Ազգային ժողովի բոլոր 7 նստաշրջանների արդյունքով ամենաակտիվ պարզամավորների փասնյակը, Գագիկ Ծառուկյանը՝ ամենաշատ բացակայածների, Նիկոլ Փաշինյանը՝ ամենաշատ դեմ քվեարկածների փասնյակները:

Նախաձեռնողականություն, ակտիվություն

«Հանրապետական» խմբակցություն

5-րդ գումարման Ազգային ժողովի 7-րդ նստաշրջանի ընթացքում ՀՀԿ-ն հեղինակել է 18 օրենսդրական նախաձեռնություն: Ամբողջությամբ ընդունվել է 6-ը: Ընդունված օրենքներից 5-ը ՀՀԿ-ն հեղինակել է այլ ուժերի հետ միասին (դրանցից 4-ն առնչվել են Ցեղասպանության 100-ամյա փառելիցին): Նստաշրջանի ընթացքում խմբակցության պարզամավորների հեղինակած 9 օրենսդրական նախաձեռնություն ընդգրկվել է քառօրյա օրակարգ, 1-ի ընդգրկումը նստաշրջանի օրակարգ հետաձգվել է մինչև 1 փարով:



ՀՀԿ-ն ունի շրջանառության մեջ դրված, բայց դեռ օրակարգ չընդգրկված 18 օրենսդրական նախաձեռնություն, դրանցից միայն 5-ն է խմբակցությունը հեղինակել 7-րդ նստաշրջանի ընթացքում: Աժ օրակարգում ՀՀԿ-ի հեղինակած 33 օրինագիծ կա, 6-ը՝ գրված 7-րդ նստաշրջանում:


Ըստ parliamentmoniotoring.am կայքի վիճակագրության՝ 7-րդ նստաշրջանի ընթացքում

ՀՀԿ խմբակցության ամենաշատ հարց տրված (25) և ելույթ ունեցած (21) պարզամավորը Խոսրով Հարությունյանն է: Խմբակցության ամենաշատ կողմ (84) քվեարկած պարզամավորը Մնացական Մնացականյանն է: Ավելի քան 2 փասնյակ ՀՀԿ-ականներ կողմ են քվեարկել 82-83 անգամ: Աշոտ Աղաբաբյանը որևէ օրինագծի քվեարկության չի մասնակցել: Նա նաև ամենաշատ բացակայած (68) ՀՀԿ-ականն է: Խմբակցության 5 պարզամավոր դեմ է քվեարկել 2, մյուսները՝ 1-ական անգամ: Միակ ձեռնպահ քվեարկածը Գարեգին Նուշիկյանն է (1): Ամենաշատ չքվեարկածը Միեր Սեդրակյանն է (19):

Աժ 5-րդ գումարման ընթացքում խորհրդարանի ամենաշատ կողմ քվեարկածների փասնյակը կազմված է բացառապես ՀՀԿ-ականներից, փասնյակը գլխավորում է Ռազմիկ Զոհրաբյանը: Ամենաշատ դեմ և ձեռնպահ քվեարկածների փասնյակներում ոչ մի ՀՀԿ-ական չկա: Ամենաշատ բացակայածների փասնյակում ՀՀԿ-ից միայն Կարեն Կարապետյանն է, ամենաակտիվների փասնյակում՝ Խոսրով Հարությունյանը:

«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն

5-րդ գումարման Ազգային ժողովի 7-րդ նստաշրջանի ընթացքում ընդունվել է ԲՀԿ պարզամավորների հեղինակած միայն 1 օրինագիծ (առաջին ընթերցմամբ): Խմբակցությունը կամ այն ներկայացնող պարզամավորները ևս 4 ընդունված օրենքների (դրանք առնչվում են Ցեղասպանության 100-րդ տարելիցին) համահեղինակ են դարձել:



Քննարկվել և մերժվել է ԲՀԿ և ՀԱԿ խմբակցությունների միասնական նախաձեռնությամբ դեռևս 6-րդ նստաշրջանում արտահերթ կարգով քառօրյալի օրակարգ ընդգրկված հայրարարության նախագիծը կառավարման ձգնաժամի մասին:

ԲՀԿ-ն ունի շրջանառության մեջ դրված, բայց դեռևս օրակարգ չընդգրկված 24 օրինագիծ, 8-ը՝ գրված 7-րդ նստաշրջանի ընթացքում: Աժ մեծ օրակարգում է ԲՀԿ հեղինակած 8 օրենքի նախագիծ, որոնցից 3-ն են գրվել 7-րդ նստաշրջանի ընթացքում:


Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 7-րդ նստաշրջանի ընթացքում

ԲՀԿ խմբակցության պարզամավորներից ամենաշատը ելույթ ունեցել (33) և հարց է տվել (28) Միքայել Մելքունյանը: Ամենաշատը կողմ է քվեարկել Բազմասեր Առաքելյանը (58): Ամենաշատ ձեռնպահ քվեարկածը Էլինար Վարդանյանն է (22), ամենաշատ դեմը՝ Տիգրան Ուրիխանյանը (18): Ամենաշատը չի քվեարկել Աբրահամ Մանուկյանը (36), ամենաշատը բացակայել է Գագիկ Ծառուկյանը (84):

Ծառուկյանը գլխավորում է 5-րդ գումարման ընթացքում ամենաշատ բացակայած պարզամավորների փասնյակը: Այս փասնյակում են ԲՀԿ ևս 5 պարզամավորներ: Ամենաշատ կողմ և դեմ քվեարկածների փասնյակներում ԲՀԿ-ականներ չկան, ամենաշատ ձեռնպահ քվեարկածների փասնյակում 3-ը ԲՀԿ-ից են, ամենաակտիվների փասնյակում ԲՀԿ-ից միայն Միքայել Մելքունյանն է:

«Հայ ազգային կոնգրես» խմբակցություն

5-րդ գումարման Ազգային ժողովի 7-րդ նստաշրջանի ընթացքում ՀԱԿ խմբակցությունը հեղինակել է 10 օրենսդրական նախաձեռնություն (դրանցից 7-ի հեղինակը Հրանտ Բագրատյանն է): Ընդունվել է միայն 1-ը՝ գրված ՀՀԿ, ՀՅԴ, ՕԵԿ խմբակցությունների և Հ. Բագրատյանի համահեղինակությամբ: Նախագծերից 1-ը ընդգրկվել է քառօրյա օրակարգ, 4-ի ընդգրկումը նստաշրջանի օրակարգ հետաձգվել է մինչև 1 փարով, մեկինը մերժվել է քվեարկությամբ (Նիկոլ Փաշինյանի հեղինակած որոշման նախագիծը Սերժ Սարգսյանին պաշտոնանկ անելու մասին):



Քննարկվել և մերժվել է դեռևս 6-րդ նստաշրջանում արտահերթ կարգով քառօրյա օրակարգ ընդգրկված հայտարարության նախագիծը կառավարման ձգնաժամի մասին (հեղինակներ՝ ՀԱԿ և ԲՀԿ):

ՀԱԿ-ն ունի շրջանառության մեջ դրված, բայց դեռևս օրակարգ չընդգրկված 5 օրենսդրական նախաձեռնություն, 3-ը՝ գրված 7-րդ նստաշրջանի ընթացքում: Խմբակցությունը շրջանառության մեջ դրված ևս 8 նախագծի համահեղինակ է:


Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 7-րդ նստաշրջանի ընթացքում

ՀԱԿ խմբակցության ամենաշատ կողմ (39) և դեմ (33) քվեարկած պարզամավորը Նիկոլ Փաշինյանն է: Ձեռնպահ ամենաշատը քվեարկել է Սրեփան Դեմիրճյանը (25): Լյուդմիլա Սարգսյանը ամենաշատ չքվեարկածն է (18): Ամենաշատը բացակայել է Հրանտ Բագրատյանը (46), նա նաև ամենաշատ հարց տված ՀԱԿ անդամն է (16): Ամենաշատը ելույթ է ունեցել Լևոն Զուրաբյանը (16):

5-րդ գումարման ընթացքում ամենաշատ կողմ քվեարկած, ինչպես նաև ամենաշատ բացակայած պարզամավորների տասնյակներում ՀԱԿ խմբակցության ոչ մի պարզամավոր չկա: Ամենաշատ ձեռնպահ քվեարկածների տասնյակում միայն Գագիկ Զհանգիրյանն է, ամենաշատ դեմ քվեարկածների տասնյակում 5-ը ՀԱԿ խմբակցությունից են:

«Ժառանգություն» խմբակցություն

5-րդ գումարման Ազգային ժողովի 7-րդ նստաշրջանի ընթացքում «Ժառանգություն» խմբակցությունը հեղինակել է 10 օրենսդրական նախաձեռնություն: 4-ը գրված այլ խմբակցությունների հետ միասին, ընդունվել է: Դրանք առնչվում են Ցեղասպանության 100-ամյա տարելիցին:



Զարուհի Փոստանջյանի հեղինակած որոշման նախագծի («2015 թ. հունվարի 12-ին Գյումրիում տեղի ունեցած դաժան սպանությունների կապակցությամբ») ընդգրկումը նստաշրջանի օրակարգ քվեարկությամբ մերժվել է: Պարզամավորի հեղինակած մեկ այլ նախագիծ՝ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի գործունեության վերաբերյալ, արդեն 2 նստաշրջան ԱԺ նախագահի կողմից շրջանառության մեջ չի դրվում:

Խմբակցությունն ունի շրջանառության մեջ դրված, բայց օրակարգ չընդգրկված 13 օրենսդրական նախաձեռնություն, 5-ը՝ հեղինակված 7-րդ նստաշրջանի ընթացքում, ևս 2 նախագծի համահեղինակ է:

«Ժառանգության» 6 նախագիծ, ներկայացված նախորդ նստաշրջաններում, ԱԺ օրակարգում է:


Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 7-րդ նստաշրջանի ընթացքում

«Ժառանգություն» խմբակցության ամենաշատ կողմ քվեարկած (37), հարց տրված (26) և ելույթ ունեցած (27) պարզամավորը Թևան Պողոսյանն է: Ամենաշատ դեմ քվեարկածը (33) և չքվեարկածը (9) Զարուհի Փոստանջյանն է: Ամենաշատը ձեռնպահ քվեարկել է Ալեքսանդր Արզումանյանը (20), ամենաշատը բացակայել է Ռուբեն Հակոբյանը (24):

5-րդ գումարման ընթացքում ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորների տասնյակում «Ժառանգություն» խմբակցության ոչ մի անդամ չկա: Ամենաշատ բացակայածների տասնյակում «Ժառանգությունից» միայն Զարուհի Փոստանջյանն է, դեմ քվեարկածների տասնյակում կա խմբակցության 4 պարզամավոր, ամենաակտիվների տասնյակում «Ժառանգությունից» Թևան Պողոսյանն է:

«Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցություն

Ազգային ժողովի 5-րդ գումարման 7-րդ նստաշրջանի ընթացքում ընդունվել է ՀՅԴ խմբակցության հեղինակած 2 օրենսդրական նախաձեռնություն: Նստաշրջանի ընթացքում ընդունված ևս 3 օրենքի համահեղինակ է:



Աժ օրակարգում ՀՅԴ-ի՝ տարբեր նստաշրջաններում հեղինակած 4 նախագիծ կա: Համահեղինակ է շրջանառության մեջ դրված, բայց դեռևս օրակարգ չընդգրկված 3 նախագիծ:


Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 7-րդ նստաշրջանի ընթացքում

ՀՅԴ խմբակցության ամենաշատ կողմ (32) և դեմ (7) քվեարկած պարզամավորը Միքայել Մանուկյանն է: Ամենաշատ ձեռնպահ քվեարկածը Աղվան Վարդանյանն է (41): Նստաշրջանի ընթացքում ամենաշատը բացակայել է Արմեն Բաբայանը (40): Ամենաշատ հարց տրված (22) և ելույթ ունեցած (20) պարզամավորը Արծվիկ Մինասյանն է:

5-րդ գումարման ընթացքում խորհրդարանի ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորների տասնյակում ՀՅԴ ոչ մի պարզամավոր չկա: Ձեռնպահ քվեարկածների տասնյակում դաշնակցականները 4-ն են: Ամենաշատ բացակայած 10 պարզամավորներից միայն 1-ն է ՀՅԴ խմբակցությունից՝ Արմեն Բաբայանը: Ամենաշատ դեմ քվեարկածների տասնյակում ՀՅԴ-ից միայն Արծվիկ Մինասյանն է, ով նաև գլխավորում է ամենաակտիվների տասնյակը:

«Օրինաց երկիր» խմբակցություն

5-րդ գումարման Ազգային ժողովի 7-րդ նստաշրջանի ընթացքում ընդունված օրենքներից 4-ի հեղինակների շարքում կա ՕԵԿ պարզամավորի անուն. բոլոր օրինագծերը վերաբերում են Ցեղասպանությանը:



ՕԵԿ խմբակցության հեղինակած 3 նախագծի ընդգրկումը նստաշրջանի օրակարգ հետաձգվել է մինչև 1 փարով:

Աժ օրակարգում ընդգրկված է ՕԵԿ-ի հեղինակած 4 նախագիծ՝ ներկայացված նախորդ նստաշրջաններում: ՕԵԿ-ն ունի շրջանառության մեջ դրված և դեռևս օրակարգ չընդգրկված 20 օրենսդրական նախաձեռնություն, որոնցից միայն 3-ն է հեղինակել 7-րդ նստաշրջանի ընթացքում:

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 7-րդ նստաշրջանի ընթացքում

ՕԵԿ խմբակցության ամենաշատ հարց տված (39) և դեմ քվեարկած (12) պարզամավորը Հովհաննես Մարգարյանն է, ամենաշատ ելույթ ունեցած (39) և կողմ քվեարկած (37) պարզամավորը Հեղինե Բիշարյանն է: Ամենաշատը բացակայել է (20) և չի քվեարկել (8) Միեր Շահգելոյանը:

5-րդ գումարման ընթացքում խորհրդարանի ամենաշատ բացակայած, կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած պարզամավորների փասնյակներում ՕԵԿ ներկայացուցիչ չկա: Ամենակարիվ պարզամավորների փասնյակում ՕԵԿ-ականները 3-ն են:

ՆԱՏԱՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՐԲԱԳԾԵՐԸ

2015թ. փետրվարի 12-ին ՀՀ քաղաքական խորհրդում կուսակցության ղեկավար, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԲՀ կուսակցության նախագահ, ԱԺ ԲՀ խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանին քաղաքական ասպարեզից հեռացնելու անհրաժեշտության վերաբերյալ շրջադարձային նշանակություն ունեցավ խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության, ընդդիմության դերակատարման, քաղաքական ակտիվության վրա: Նախագահի ելույթում էականը ոչ այնքան ԲՀ առաջնորդի քաղաքական հավակնությունների կամ անձնական «արժանիքների» մասին հնչեցված որակումներն ու գնահատականներն էին, որքան անուղղակի հրահանգները օրենսդիր և գործադիր իշխանություններին՝ պարզամավոր և գործարար Ծառուկյանի նկատմամբ իրավական հետևանքներ առաջացնող միջոցներ ձեռնարկելու մասին:

ՀՀ նախագահին «առաջարկում» էր.

- ◆ պարզել ԱԺ նիստերից Գագիկ Ծառուկյանի բացակայությունների հիմքերը՝ փաստացի ձեռնարկելով նրան պարզամավորական մանդատից զրկելու գործընթաց,
- ◆ ստուգել Ծառուկյան-գործարարի սեփականությունը հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների կողմից միլիարդավոր դրամ հարկերը բարեգործության անվան փակ քողարկել-չվճարելու, պետության նկատմամբ հարկային պարտավորություններից խուսափելու մասին տեղեկությունները,
- ◆ ստուգել «բազմաթիվ քրեական հանցագործություններ պրոֆեսիոնալ կերպով քողարկելու մեխանիզմ հիմնելու» մասին լուրերը և ընթացք փակ դրանց:

Այս հայտարարությունից մի քանի օր անց Գագիկ Ծառուկյանը, պարզառաքանելով «իշխանության հետ արյունալի բախումներից խուսափելու անհրաժեշտությունը», հայտարարեց ԲՀ նախագահի կարգավիճակը թողնելու և քաղաքականությունից հեռանալու մասին:

Ծառուկյանի քաղաքական մեկուսացման ազդեցությունը ԲՀ խմբակցության ԵՎ ոչ իշխանական հարվածի վրա

Քաղաքականությունից հեռանալու մասին Գագիկ Ծառուկյանի որոշումը հանգեցրեց խորհրդարանում մեծությամբ երկրորդ խմբակցության կշռի և դերակատարության նվազման: 2015թ. մարտի 5-ին ԲՀ 8-րդ արտահերթ համագումարից հետո կուսակցությունը լքեց 11 պարզամավոր. նրանցից 3-ը, ովքեր պարզամավոր էին ընտրվել մեծամասնական ընտրակարգով, դուրս եկան նաև ԲՀ խմբակցությունից: Մյուսները թեև ֆորմալ առումով շարունակում են մնալ խմբակցության կազմում, սակայն կաշկանդված չեն վերջինի քաղաքական որոշումներով և գործում են որպես անկախ պարզամավորներ:

Նրանց կողմից խմբակցության անդամության ֆորմալ կարգավիճակի պահպանումը պայմանավորված է պարզամավորական մանդատի չզրկվելու հանգամանքով: Ըստ էության՝ բուն ԲՀԿ կուսակցությունը խորհրդարանում այժմ ներկայացնում է ընդամենը 22 պարզամավոր: ԲՀԿ հիմնադիր առաջնորդի քաղաքական մեկուսացմամբ փրոհվեց ու ունեցած կշռից զրկվեց 2012-ի ընտրությունների արդյունքներով խորհրդարանում ներկայացված մեծությամբ երկրորդ կուսակցությունը:

7-րդ նստաշրջանի հենց մեկնարկից ակնհայտ դարձավ, որ փոքրամասնությունը ներկայացնող ուժերը՝ ՀԱԿ-ը, «Ժառանգությունը», ՀՅԴ-ն և ԲՀԿ-ն, որոնք նախորդ 2 նստաշրջաններում ձևավորել էին համագործակցության այսպես կոչված «քառյակի» (6-րդ նստաշրջանից հետո՝ «եռյակի») ձևաչափը, կորցրել են կոնսենսուսային որոշումների հիման վրա առանձին հարցերում միասնական ձևակապով հանդես գալու կարողությունը: Ընդդիմության նախաձեռնողականության, ակտիվության մակարդակի անկումը փաստվում է պարզ համեմատությամբ.

- ◆ 6-րդ նստաշրջանում հրավիրված 7 արտահերթ նիստ-նստաշրջաններից 5-ի նախաձեռնությունը եղել է քաղաքական փոքրամասնությունը ներկայացնող ուժերինը՝ առանձին կամ միասնաբար: 7-րդ նստաշրջանում որևէ արտահերթ նիստ կամ նստաշրջան փոքրամասնությունը ներկայացնող ուժերի կողմից չի հրավիրվել:
- ◆ 6-րդ նստաշրջանում ոչ իշխանական խմբակցությունները ներկայացնող պարզամավորները 4 անգամ օգտվել են ԱԺ կանոնակարգ օրենքի 104.2. հոդվածով սահմանված՝ արտահերթ ռեժիմով հարցի քննարկում նախաձեռնելու իրենց իրավասությունից, 7-րդ նստաշրջանում նման որևէ նախաձեռնություն չի եղել:
- ◆ 2014թ. փետրվարին ոչ իշխանական բոլոր 4 ուժերը միացյալ գազամատակարարման ոլորտի ուսումնասիրության նպատակով ԱԺ ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու նախաձեռնությանը: Մինչդեռ 7-րդ նստաշրջանի ընթացքում «Ժառանգության» և ՀԱԿ-ի կողմից առանձին-առանձին նախաձեռնվել է ԱԺ ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մեկական փորձ, որոնցից ոչ մեկին մյուս ուժերը չեն միացել, և դրանք ընթացք չեն ստացել:
- ◆ Եթե նախորդ նստաշրջաններում ԱԺ ոչ իշխանական խմբակցությունները հիմնականում քննադատության և առարկությունների թիրախ էին դարձնում կառավարության կամ ԱԺ մեծամասնությունը ներկայացնող պարզամավորների նախաձեռնությամբ ներկայացված օրինագծերը, և քաղաքական պայքարն ընթանում էր դասական փոքրամասնություն-մեծամասնություն փրոյեկտում, ապա 7-րդ նստաշրջանում այդ պայքարն առավելապես ընթանում էր ոչ իշխանական ուժերի միջև՝ ուղեկցվելով միմյանց նախաձեռնությունները մերժելու, փոխադարձ մեղադրանքներ և վիրավորանքներ հնչեցնելու դրսևորումներով:

Բացակայությունների և պարասխանադրության հարցը

Ըստ parliamentmonitoring.am-ի վիճակագրության՝ Գագիկ Ծառուկյանը 7-րդ նստաշրջանում բացակայել է բոլոր՝ 529 քվեարկություններից, ինչը նրա երբևէ գրանցած ամենավաղ ցուցանիշն է: Նա ոչ միայն նստաշրջանի, այլ նաև ողջ գումարման ընթացքում ամենաշատ բացակայած պարզամավորն է: Ծառուկյանի՝ քաղաքականությունից հեռանալու մասին հայտարարությունից հետո բացակայությունների հարցը նստաշրջանի ընթացքում քննարկման առարկա չի դարձել, իսկ նախկին բացակայությունները («Նախագահի փեդրվարի 12-ի հայտնի հայտարարությունից հետո՝ «օրենսդիր մարմնի նկատմամբ անթույլատրելի արհամարհական վերաբերմունքի և անհեթեթ վիճակին վերջ դնելու քայլերի» մասին) հարգելի են համարվել:

Հանրությունը հնարավորություն չունեցավ տեղեկանալու, թե ինչպես ԱԺ նախագահը «լուծեց» Ծառուկյանի բացակայությունների հիմքերը վերստուգելու և կրկին հարգելի համարելու հարցը: Ծառուկյանի պարասխանադրության հարց խորհրդարանում չբարձրացվեց, պարզամավորը շարունակեց պահպանել իր մանդատը և 7-րդ նստաշրջանի ընթացքում որևէ մասնակցություն չունեցավ խորհրդարանի աշխատանքին:

Գագիկ Ծառուկյանի բացակայությունների խնդիրը սրեց ընդհանրապես պարզամավորների բացակայությունները հարգելի կամ անհարգելի ճանաչելու ընթացակարգի թափանցիկության և օբյեկտիվության հիմնահարցը: «ԱԺ կանոնակարգ» օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է պարզամավորի բացակայությունները հարգելի համարելու հիմքերը՝ ժամանակավոր անաշխատունակության թերթիկի ներկայացում, գործուղում, քրեական հետապնդում, քվեարկությանը չմասնակցելու մասին հայտարարություն, քվեարկությունից հետո 4-օրյա կամ հերթական նստաշրջանի ավարտից հետո 15-օրյա ժամկետներում բացակայության պարճառի մասին պաշտոնապես տեղեկացում Ազգային ժողովի նախագահին:

Կանոնակարգով սահմանված հիմքերից վերջին 2-ի դեպքում բացակայությունները հարգելի կամ անհարգելի ճանաչելու հարցը, ըստ էության, թողնված է ԱԺ նախագահի սուբյեկտիվ հայեցողությանը, քանի որ ամրագրված չեն այն հիմքերը, որոնց առկայությամբ բացակայությունները չեն կարող համարվել հարգելի: Բացի այդ՝ ԱԺ նախագահի կողմից բացակայությունները հարգելի կամ անհարգելի ճանաչելու գործընթացը բավարար չափով թափանցիկ չէ և հանրային վերահսկողության առումով դժվար է հասկանալ, թե որքանով են արժանահավատ ներկայացված փաստաթղթերը կամ որոնք են ԱԺ նախագահի հիմնավորումներն ու շարժառիթները: Սա, մի կողմից, ԱԺ նախագահին մանրելու հնարավորություն է տալիս, մյուս կողմից՝ անվստահություններ չնուրբացնելու բացակայությունների գործունե անձնական կամ քաղաքական նպատակներով շահարկելու առումով:

Խնդիրն էականորեն կարգավորված կլիներ, եթե նախորդ 2 փարվա ընթացքում ԱԺ-ն փաստացի անգործություն չցուցաբերեր ՍԴ 2013թ. ապրիլի 16-ի որոշման կադարման հարցում: Այդ որոշմամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվեցին «ԱԺ կանոնակարգ» օրենքի այն դրույթները, որոնցով խորհրդարանը քվեարկությամբ է որոշում անհարգելի բացակայությունների հիման վրա պարգամավորի լիազորությունների դադարեցման հարցը: Համաձայն որոշման՝ մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայության դեպքում պարգամավորի լիազորությունները համարվում են դադարեցված իրավունքի ուժով՝ համապատասխան արձանագրության հիման վրա: ՍԴ որոշումը խորհրդարանին պարտավորեցնում էր ԱԺ կանոնակարգում կադարել դրանից բխող փոփոխություններ և լրացումներ: Առայսօր այդ պահանջը կադարված չէ:

ԱԺ ՎԵՐԱՀԱՄԱՐՈՒԹՅՈՒՆ

5-րդ գումարման Ազգային ժողովի 7-րդ նստաշրջանի ընթացքում վավերացվել է 17 միջազգային պայմանագիր, ընդունվել է 2 հայտարարություն, հաստատվել է ՎՊ 2015թ. գործունեության ծրագիրը, 2014թ. պեղական բյուջեի կատարման փորձի հաշվետվությունը, ի գիտություն են ընդունվել ՀԾԿՀ և ՏՄՊՊՀ 2015թ. գործունեության փորձի ծրագրերը, ՀՀ դատախազության 2014թ. գործունեության մասին հաղորդումը, ՀՀ գազամատակարարման համակարգի գործունեությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը, ինչպես նաև ՎՊ-ի և ՀՌԱՀ-ի 2013թ. հաշվետվությունները:

Վերահսկողությունը պառլամենտի կարևորագույն գործառնություններից է՝ սահմանված երկրի բարձրագույն օրենքով: Սահմանադրությամբ խորհրդարանին վերապահված իրավասությունները բխում են իշխանությունների փոխանցման ու հակակշռման սկզբունքից, ինչը ենթադրում է խորհրդարանի լրջագույն պատասխանատվություն այդ գործառնության իրականացման: ԱԺ-ն հաստատում է ծրագրեր ու հաշվետվություններ, վավերացնում է միջազգային կոնվենցիաներ, միջպեղական պայմանագրեր ու համաձայնագրեր, նշանակում բարձրաստիճան պաշտոնյաների: Այսինքն՝ սահմանադրորեն խորհրդարանն օժտված է պետության համար կարևոր հարցերում իր վերաբերմունքն ունենալու և արտահայտելու իրավասությամբ: Այլ հարց է, թե այդ իրավասությունից օգտվելու ինչպիսի ավանդույթներ են ձևավորված:

Կարևոր է նաև, թե ինչպիսի իրավական մեխանիզմներ են ստեղծված խորհրդարանի վերահսկողական գործառնության արդյունավետ իրականացման համար: Իսկ պատասխանն անփոփոխ է՝ առայժմ Ազգային ժողովի վերահսկողությունն ունի առավելապես ֆորմալ բնույթ, քանի որ մեծ մասամբ հաշվետվություն-հաղորդումների ներկայացման ընթացակարգերը խորհրդարանի համար նախատեսում են սոսկ «ի գիտություն ընդունելու» իրավասություն: Մյուս՝ առավել սակավ դեպքերում, երբ Ազգային ժողովն օժտված է վերահսկողական լուրջ լծակներով (կառավարության ծրագրի, բյուջեի կատարողականի հաստատում...), խորհրդարանի քաղաքական մեծամասնությունն իր վարքագծով է չեզոքացնում այդ հնարավորությունը՝ մշտապես վստահություն դրսևորելով գործադիրի հանդեպ:

ԱԺ-ն 7-րդ նստաշրջանի ընթացքում նույնպես իր առանցքային գործառնություններից մեկը՝ վերահսկողությունը, իրականացրել է ոչ ամբողջապես և ցածր արդյունավետությամբ: Կրկին դրսևորվել են այս խորհրդարանի համար ավանդական դարձած թերություններն ու բացթողումները: Արձանագրվել են նաև ԱԺ-ի ֆունկցիոնալ դերակատարման բարձրացմանն ուղղված նախաձեռնություններ, որոնք արմատավորվելու դեպքում կարող են նպաստել խորհրդարանի առջև գործադիր և դատական իշխանությունների հաշվետվողականության մեծացմանը:

ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ՉԻ ՓՈԽՎՈՒՄ

Դրական տեղաշարժ չկա ԱԺ-ին ներկայացվող հաշվետվությունները, հաղորդումները, ծրագրերը քննարկելու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետների խախտման պրակտիկան վերացնելու կամ սահմանափակելու ուղղությամբ: Սա ինքնանպատակ է դարձնում առանցքային նշանակություն ունեցող փաստաթղթերի ուսումնասիրությունն ու դրանց միջոցով իրականացվող ծրագրերի նկատմամբ հանրային վերահսկողության ապահովումը:

Մասնավորապես, ԱԺ-ն միայն 2015թ. առաջին կիսամյակում է ի գիտություն ընդունել Վերահսկիչ պալատի 2013թ. փարեկան հաշվետվությունը, ինչպես նաև Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2013թ. գործունեության մասին հաղորդումը: Ուշացած, հաշվետու ժամանակահատվածի իրողություններից կտրված քննարկումները նվազեցրել են ԱԺ-ի շահագրգռությունը փաստաթղթերում արձանագրված խնդիրներին արձագանքելու, լուծումներ առաջարկելու հարցում:

Արդեն ակնհայտ է, որ ժամկետների խախտման պրակտիկան կշարունակվի նաև հաջորդ նստաշրջանում: ԿԲ 2014թ. դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը, ՎՊ 2014թ. գործունեության հաշվետվությունը, ՀՌԱՀ և ՀՀՌԽ 2014թ. գործունեության մասին հաղորդումները, ՄԻՊ 2014թ. զեկույցը ԱԺ-ն հասցրել է միայն ընդգրկել քառօրյա նիստերի օրակարգ, ինչը նշանակում է, որ դրանք կքննարկվեն և ի գիտություն կընդունվեն լավագույն դեպքում միայն 8-րդ նստաշրջանի ընթացքում: Չի բացառվում, որ կրկնվի նախկինում բազմիցս արձանագրված երևույթը, երբ պետական մարմինների նախորդ փարվա գործունեության հաշվետվություններն ու հաջորդ փարվա ծրագրերն ԱԺ-ն հաստատում է գրեթե միաժամանակ՝ խախտելով դրանց քննարկման հաջորդականության պարզառահեղանակային կապերը:

Օրինակ, ԿԲ 2015թ. դրամավարկային քաղաքականության ծրագիրը, որը պետք է հաստատվեր դեռևս 2014թ. վերջին, քննարկման առարկա կդառնա միայն հաջորդ նստաշրջանի ընթացքում, երբ այդ նույն ծրագրի իրականացումը կլինի փաստացի ավարտական փուլում: Այս իրավիճակի հիմնական պարճառը օրենսդրական բացն է: «ԱԺ կանոնակարգ» օրենքը սահմանում է ԿԲ ծրագրի և հաշվետվության՝ ԱԺ ներկայացվելու և շրջանառության մեջ դրվելու ընթացակարգը (հոդված 102 և 103), սակայն չի սահմանում ԱԺ լիազուրկար նիստում դրանք քննարկման դնելու ժամկետները՝ խորհրդարանին թույլ տալով ցուցաբերել կամայական մոտեցում:

Մյուս կողմից, սակայն, պրակտիկան ցույց է տալիս, որ իրավակարգավորման հստակությունը դեռևս ժամկետների պահպանման երաշխիք չէ: Դա է վկայում այն, որ խորհրդարանը ՎՊ 2015թ. գործունեության ծրագիրը քվեարկությամբ ընդունել է միայն 5-րդ գումարման 7-րդ նստաշրջանի ընթացքում, այն դեպքում, երբ «ԱԺ կանոնակարգ» օրենքի 100-րդ հոդվածով սահմանվում է, որ ՎՊ գործունեության փարեկան ծրագրի նախագիծն ԱԺ-ի քննարկմանն է ներկայացվում բյուջեփայլի փարին սկսվելուց առնվազն 60 օր առաջ, իսկ փաստաթղթի քննարկումն սկսվում է ոչ ուշ, քան բյուջեփայլի փարվան նախորդող փարվա դեկտեմբեր ամսվա առաջին չորսօրյա նիստում:

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

7-րդ նստաշրջանում առաջին անգամ ՀՀ գլխավոր դատախազը ԱԺ-ում հանդես եկավ դատախազության նախորդ տարվա գործունեության մասին հաղորդմամբ: 2014թ. մարտին «Դատախազության մասին» օրենքում և «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքում կատարված փոփոխություններով սահմանվեց, որ Դատախազության նախորդ տարվա գործունեության մասին հաղորդումը, խորհրդարանին ներկայացվելուց բացի, պետք է նաև քննարկվի ԱԺ նիստերի դահլիճում: Ընթացակարգը նախատեսում է հաղորդման ներկայացում առանց հարակից զեկույցի, հարց ու պատասխան և մտքերի փոխանակություն: Ընդունվում է ի գիտություն՝ առանց քվեարկության դրվելու:

Չնայած այն հանգամանքին, որ հաղորդումը քննարկման ներկայացնելու համար «ԱԺ կանոնակարգ» օրենքը կոնկրետ ժամկետներ չի սահմանում (ի տարբերություն շրջանառության մեջ դնելու ռեժիմի), հաղորդումը քննարկվել է օպտիմալ ժամանակահատվածում:

Տեղեկանք: Հաղորդումը ներկայացնելու ժամանակ ՀՀ գլխավոր դատախազը կենտրոնացել է պաշտոնը ստանձնելիս իր կողմից որպես առաջնահերթություն առանձնացված 3 ուղղությունների վրա՝ դատախազության համակարգում կոռուպցիայիևոչպրոֆեսիոնալիզմի դեմ պայքար, դատախազների քաղաքական չեզոքության ապահովում և անպատժելիության մթնոլորտի վերացում: Այդ համարեքստում ներկայացվել են հանցավորության կանխարգելմանը, հանցագործությունների բացահայտմանը, հետաքննության և նախաքննության որակն ու արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված քայլերը, մեղադրանքի պաշտպանության, պատիժների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության արդյունքները: Նշվել է, որ չնայած 2014թ. հանրապետությունում 780-ով նվազել է հանցագործությունների թիվը, սակայն աճել է միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների քանակը: Իբրև հիմնահարց՝ առանձնացվել է հետաքննության մարմինների կողմից ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների գծով օպերատիվ-հետախուզական միջոցառումների ցածր որակը և անարդյունավետությունը:

Գլխավոր դատախազի հաղորդումը ԱԺ-ում քննարկվել է գրեթե մեկ ամբողջ քառօրյա: Գևորգ Կոստանյանին ուղղվել է 24 հարց, հնչել է երկու տասնյակից ավելի ելույթ: Նման երկար ու տարողունակ քննարկումներ ԱԺ-ում սովորաբար չեն ծավալվում նույնիսկ ՀՀ պետական բյուջեի նախագծերի շուրջ: Այս ուշադրությունը վկայում է հաղորդման, արդարադատության համակարգի խնդիրների նկատմամբ պարզամտորեն հետաքրքրության, դատաիրավական համակարգի այս առանցքային ոլորտի հաշվետվողականությունը բարձրացնելու պահանջարկի մասին:

ՀՀ գլխավոր դատախազի հաղորդումները բովանդակային քննարկման առարկա դարձնելու իրավասության լիարժեք կիրառումը ԱԺ-ին տալիս է վերահսկողական գործառույթի ձևականացումից հրաժարվելու հնարավորություն:

ԱԺ-ն, սակայն, գործող օրենսդրությամբ չունի դափնախազության գործունեությունը քվեարկությամբ կամ որևէ փաստաթղթով քաղաքական գնահատականի արժանացնելու իրավունք, չնայած օժտված է գլխավոր դափնազին հանրապետության նախագահի առաջարկությամբ նշանակելու և պաշտոնանկ անելու իրավասությամբ: Սահմանադրական այս լուծումը բխում է դափնախազության անկախության ապահովման հիմնարար սկզբունքի տրամաբանությունից, սակայն բաց է մնում դափնազին գործունեության համար խորհրդարանի քաղաքական պարասխանափոխության հարցը: Այս պայմաններում ԱԺ-ն մնում է գլխավոր դափնազին նշանակման և պաշտոնանկման հարցում նախագահի կայացրած որոշումներն անվերապահորեն կատարողի դերում:

«Գազի հանձնաժողովի» ժամկետանց եզրակացության քննարկումը

7-րդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանն ի գիտություն ընդունեց Հայաստանում գազամատակարարման համակարգի գործունեությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը:

Տեղեկանք: Հանձնաժողովն ստեղծվել էր 2013թ. հայ-ռուսական «գազային» համաձայնագրերի վավերացումից հետո՝ նպատակ ունենալով ուսումնասիրել և եզրակացություն ներկայացնել ՌԴ-ից 2011-13թթ. ներմուծված գազի դիմաց կուտակված 300 միլիոն դոլար պարտքի ձեւավորման օրինականության, գնագոյացման հիմնավորվածության, նախկին «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում ՀՀ բաժնեմասը ռուսական կողմին օտարելու որոշման հիմնավորվածության վերաբերյալ: Եզրակացությունը խորհրդարանը քննարկել է հանձնաժողովի ստեղծման մասին որոշմամբ սահմանված ժամկետների խախտմամբ: 2014թ. հունիսին այդ որոշման մեջ կատարված փոփոխություններով ԱԺ-ն հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգել էր մինչև 6-րդ նստաշրջանի ավարտը՝ հիմք ընդունելով լրացուցիչ մասնագիտական ուսումնասիրություններ կատարելու և ավելի փաստարկված ու համակողմանի եզրակացություն ներկայացնելու վերաբերյալ հանձնաժողովի հիմնավորումը: Հանձնաժողովը, սակայն, վերջնական եզրակացությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել, մինչ այդ էլ հանդես չի եկել գործունեության ժամկետը երկարացնելու առաջարկով:

Հանձնաժողովի 4 ենթախմբերի կատարած ուսումնասիրությունների հիման վրա կազմված եզրակացությունը, ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Վարդան Այվազյանի զեկույցը ցույց տվեցին, որ ուսումնասիրության ենթակա հարցերի վերաբերյալ հանձնաժողովն ընդհանուր առմամբ էական խախտումներ չի հայտնաբերել. հիմնավորված է համարվել կուտակված պարտքի չափը, դրա դիմաց «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի ՀՀ Կառավարության բաժնեմասը ռուսական կողմին հանձնելու գործարքը: Արձանագրված խախտումները վերաբերում են սպառողներին մատակարարվող գազի ծավալների հաշվառմանը, գազի հաշվիչների ստուգաչափմանը և նորոգմանը, գազամատակարարման համակարգումներդրումների արդյունավետության, տեխնոլոգիական կորուստների հաշվարկման մեթոդաբանության, որոշ չափով՝ սակագնի կազմը և կառուցվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխանեցնելու խնդիրներին: Դրանց առնչությամբ հանձնաժողովը հանդես է եկել կոնկրետ դիտողություններով և թիրախային առաջարկություններով:

Եզրակացությունն արժանացավ ԱԺ քաղաքական փոքրամասնության քննադատությանը՝ ցույց տալով, որ չնայած կատարած ծավալուն ուսումնասիրություններին՝ հանձնաժողովն իր առջև դրված հիմնական խնդիրը չի լուծել և ձևավորվել է ընդամենը «գազային» պայմանագրերի վավերացման շուրջ առաջացած հասարակական-քաղաքական կրքերը թուլացնելու նպատակով: Դրա մասին էր խոսում նաև այն, որ ի սկզբանե ընտրվել է եզրակացության վերաբերյալ որևէ որոշում չընդունելու և միայն ի գիտություն ընդունելով բավարարվելու փարբերակը: Քննարկումը ցույց տվեց, որ եզրակացության վերաբերյալ որևէ փաստաթուղթ չընդունելը սահմանափակում է հանձնաժողովի բացահայտած խախտումների վերացման, դրանց հետևանքների գնահատման և պատասխանատուների բացահայտման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու ԱԺ-ի հնարավորությունները:

Այս հանգամանքը հիմք ընդունելով ԱԺ ոչ իշխանական խմբակցությունները հանդես եկան եզրակացության իրավական նոր ընթացք տալու 2 նախաձեռնություններով: ՀԱԿ խմբակցությունը շրջանառության մեջ դրեց որոշման նախագիծ, որով առաջարկվում էր հանձնաժողովի եզրակացությունն ուղարկել ՀՀ դատախազություն՝ արձանագրված չարաշահումների փաստերով քրեական հետապնդում հարույցելու և մեղավորներին պատժելու նպատակով: Միաժամանակ, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին առաջարկվում էր ուսումնասիրել արձանագրված խնդիրները և ԱԺ-ին ներկայացնել դրանց վերացմանը, սակագների նվազեցմանը, կորուստների կրճատմանն ուղղված միջոցառումների ծրագիր: Այս նախաձեռնությանը խորհրդարանը ընթացք չտվեց: Պատճառը քաղաքական կամքի բացակայությունն էր, թեպետ ԱԺ-ում համանման նախադեպ գրանցվել է. 2013թ. ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը ՀՀ գլխավոր դատախազություն էր ուղարկել ՎՊ 2012թ. աղմկահարույց հաշվետվությունը:

Փոխարենը ԱԺ-ն ընդունեց ՀՅԴ, «Ժառանգություն» խմբակցությունների և անկախ պատգամավոր Էդմոն Մարուքյանի ներկայացրած և կոմպրոմիսային լուծումներով մեծամասնության հավանությանն արժանացած մեկ այլ որոշում: Ըստ դրա՝ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին տրվում է մշտադիտարկման գործառույթ: Նախատեսվում է ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության մեջ նշված առաջարկությունների կապակցությամբ քննարկումներ անցկացնել ոլորտը կարգավորող իրավասու պետական մարմինների, գազամատակարարման ոլորտի կազմակերպությունների հետ և մինչև այս գումարման ԱԺ լիազորությունների ավարտը, յուրաքանչյուր հաջորդ նստաշրջանում, ներկայացնել եզրակացություն առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ:

Այսպիսով՝ օրակարգից հանելով արձանագրված խախտումների համար պատասխանատվության հարցը՝ ԱԺ-ն բավարարվեց առաջարկությունների կատարմանը հետևելու ընթացակարգով: Այս լուծումը խորհրդարանին ընդամենը դիտորդի կարգավիճակ է վերապահում. որոշումը չի ենթադրում բացահայտված խախտումների վերացման գործընթացի վրա որևէ կոնկրետ ազդեցություն, ինչն ինքնին նվազեցնում է մշտադիտարկման գործնական նշանակությունը:

ԱԺ այս որոշումը, սակայն, ուշագրավ է եզրակացություններն ընդունելու մեխանիզմով: Սա եզակի դեպքերից է, երբ խորհրդարանը քվեարկությամբ է որոշելու փաստաթուղթն ի գիտություն ընդունելու հարցը. քվեարկության արդյունքում որոշման չընդունումը հավասարազոր է դառնում հանձնաժողովի եզրակացությունը մերժելուն:

ԱԺ ՕՐԵՆԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

5-րդ գումարման Ազգային ժողովի 7-րդ նստաշրջանի ընթացքում ընդունվել է 112 օրենք (53 օրենսդրական նախաձեռնություն), որոնցից միայն 6-ն են «մայր» օրենքներ, իսկ 106-ը փոփոխություններ ու լրացումներ են գործող օրենքներում: Ընդունված օրենքներից 10-ի հեղինակը ԱԺ պարզամավորներն են, 102-ինը՝ ՀՀ կառավարությունը: Օրենքների կեսից ավելին՝ 61-ը, ընդունվել է արտահերթ նիստերի (19) և նստաշրջանների (42) ընթացքում: Ընդունված օրենքների գերակշիռ մասը վերաբերում է պետաիրավական (45) ոլորտին: 23 փոփոխություն է կատարվել փնտեսական, 8 սոցիալական, 6 պաշտպանության ոլորտների օրենսդրության մեջ:

Առանցքային փոփոխություններ՝ արտահերթ ռեժիմով

ԱԺ 7-րդ նստաշրջանի ընթացքում գումարված 3 արտահերթ նիստերից և 3 արտահերթ նստաշրջաններից միայն մեկն է եղել խորհրդարանի նախաձեռնությունը. ընդունվել է ԱԺ հայտարարություն՝ Հայոց Ցեղասպանության 100-րդ փարեղիցի կապակցությամբ: Համեմատության համար նշենք, որ նախորդ՝ 6-րդ նստաշրջանի ընթացքում հրավիրված 7 արտահերթ նիստ-նստաշրջաններից 5-ը նախաձեռնել էր խորհրդարանական փոքրամասնությունը:

Շարունակելով ձևավորված ավանդույթը՝ խորհրդարանն արտահերթ նիստերի և նստաշրջանների ընթացքում ընդունել է ավելի շատ օրենք, քան ողջ հերթական նստաշրջանի ընթացքում. 112 օրենքից 61-ն ընդունվել է արտահերթ նիստերում ու նստաշրջաններում:

Կառավարությունը հերևողական է եղել ծանրաբեռնված օրակարգերով արտահերթ նստաշրջաններ և նիստեր հրավիրելու հարցում: Առանց լուրջ հիմնավորումների խորհրդարանին են ներկայացվել անհետաձգելի համարված բազմաթիվ օրինագծեր, չհիմնավորված շտապողականության արդյունքում օրենսդրական նախաձեռնությունները հաճախ ընդունվել են իրավական ընթացակարգերի և պահանջների խախտմամբ՝ հարույցելով պարզամավորների դժգոհությունը և խնդրահարույց դառնալով օրենքների ընդունման իրավաչափության փեսանկյունից:

Կառավարության նախաձեռնությամբ հունիսի 15-ին հրավիրված արտահերթ նստաշրջանի 7 օրերի ընթացքում կազմակերպվել է 52 քվեարկություն, ընդունվել է 42 օրենք, վավերացվել է 7 միջազգային համաձայնագիր: 38 օրինագիծ քննարկվել է հատուկ կարգով՝ 24-ժամյա ռեժիմով. խորհրդարանը դրանցից 35-ն ընդունել է երկու, 3-ը՝ միանգամից երեք ընթերցումներով:

Հարկանշական է, որ օրակարգային հարցերի մեծ մասը առանցքային փոփոխություններ է առաջարկել սոցիալ-փնտեսական, հարկային, բյուջեփային ոլորտներին վերաբերող օրենսդրական կարգավորումներում:

Հունիսյան արտահերթի ընթացքում

- ◆ 2 ընթերցումներով ընդունվել է **«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում»** փոփոխություններ նախատեսող օրինագիծը: Փոփոխություններն առնչվում են օրենսգրքի 56 հոդվածներին՝ վերաբերելով աշխատանքային պայմանագրերի, աշխատավարձի փոփոխության, արձակուրդների և մի շարք այլ կարևոր խնդիրների: Հիմնական նորամուծությունը «աշխատանքային գրքույկ» հասկացության վերացումն է: Կառավարությունը չի բացատրել, թե նման ծավալի եւ կարելոթության փոփոխությունները արտահերթ նստաշրջանում քննարկելու անհրաժեշտությունն ինչով է պայմանավորված, առավել սս, որ 2004թ. ընդունված և 2005-ից ուժի մեջ մտած օրենսգիրքն անցած 10 տարիներին 17 անգամ փոփոխության է ենթարկվել: Նման մեծածավալ փոփոխություն՝ օրենսգրքում կատարվել էր 2010թ-ին:
- ◆ 1-ին ընթերցմամբ ընդունվել է **«Ակցիզային հարկի մասին»** օրենքում փոփոխություններ նախատեսող օրինագիծը: Առաջարկվում է բարձրացնել ծխախոտի, ալկոհոլային խմիչքների, բենզինի և դիզելային վառելիքի համար սահմանված ակցիզային հարկի նվազագույն դրույքաչափը, ինչպես նաև ակցիզային հարկ սահմանել տրանսպորտային միջոցներում որպես վառելիք օգտագործվող սեղմված բնական գազի համար: Կառավարության հիմնավորմամբ՝ ակցիզային հարկի դրույքաչափերը վերջին տարիներին այդ ապրանքների գների աճին համապատասխան չեն ինդեքսավորվել: Փոփոխությունների նպատակը նաև Հայաստանում և ԵԱՏՄ անդամ պետություններում ակցիզային հարկի դրույքաչափերի ներդաշնակեցումն է (ԵԱՏՄ անդամ պետություններում ծխախոտի և ալկոհոլային խմիչքների համար սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերը մի քանի անգամ բարձր են Հայաստանում գործող դրույքաչափերից): Օրինագծով առաջարկվում է ակցիզային հարկը բարձրացնել 10 %-ով: Բարձրացման արդյունքում կառավարությունը մոտ 9 մլրդ դրամ բյուջեային մուտք է ակնկալում:
- ◆ 24-ժամյա ռեժիմով քննարկվել և ընդունվել է **«Պետական պարտքի մասին»** օրենքում փոփոխություններ նախատեսող օրինագիծը: Առաջարկվում է ընդամենը 1 փոփոխություն՝ 2008թ. ընդունված օրենքի 5-րդ, 7-րդ, 8-րդ հոդվածներում «պետական» բառը փոխարինել «կառավարության» բառով և պետական պարտքը վերաձևակերպել որպես կառավարության պարտք: Ըստ օրենսդրության՝ Հայաստանի պետական պարտքը չի կարող գերազանցել ՀՆԱ-ի 60 %-ը, իսկ 50 %-ը գերազանցելու դեպքում բյուջեի պակասուրդը չի կարող գերազանցել ՀՆԱ-ի 3 %-ը: ՀՀ պետբյուջեի պակասուրդը 3 %-ը գերազանցել է միայն 3 անգամ 2000, 2009 եւ 2010 թվականներին: Գործադիրի հիմնավորմամբ՝ պետական պարտքը վերաբերում է կառավարության գործողություններին, հետևաբար սահմանափակումները պետք է կիրառվեն միայն կառավարության պարտքի վրա և չվերաբերեն Կենտրոնական բանկին:

Հերթական նստաշրջանից հետո հրավիրված արտահերթ նստաշրջանների ընթացքում վավերացված 4 վարկային համաձայնագրերը ՀՀ արտաքին պարտքն ավելացրել են մոտ 500 մլն դոլարով:

- ◆ Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ բանկը «Հյուսիս-հարավ» ավտոձանապարհային միջանցքի շինարարության ֆինանսավորման համար կտրամադրի 150 միլիոն եվրո: Վարկի հասանելիության վերջնաժամկետը 2018թ. դեկտեմբերի 31-ն է, փրվում է 20 փարով, 1,65 % փոկոսադրույքով:
- ◆ Նույն բանկից Հայաստանը ևս երկու վարկ կստանա՝ 52 միլիոն դոլար «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագրի» (մարման ժամկետը՝ 25 փարի, փոկոսադրույքը՝ լողացող) և 30 մլն դոլար «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի» համար (մարման ժամկետը՝ 25 փարի, փոկոսադրույքը՝ լողացող):
- ◆ ՌԴ կառավարությունը 200 մլն դոլար արտահանման վարկ կտրամադրի ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորման համար (ժամկետը՝ 13 փարի, որից 3-ը՝ արտոնյալ, փոկոսադրույքը՝ 3 %):

ԱԺ-ն համաձայնություն է փոխել ևս մեկ՝ հայ-գերմանական ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրին, որը Հայաստանին առաջիկայում հնարավորություն է տալու Վերականգնման վարկերի բանկից ստանալ ֆինանսական օժանդակություն՝ արտոնյալ պայմաններով: Փաստաթուղթը ենթադրում է վարկային համաձայնագրերի սփորագրում 5 ուղղություններով, 205 մլն եվրո ընդհանուր ծավալով: Համաձայնագրերից 2-ն, ի դեպ, կնքելու է Կենտրոնական բանկը:

Արտահանման մենաշնորհացման ռիսկերը՝ ԱԺ ուշադրության կենտրոնում

7-րդ նստաշրջանն առանձնացել է հարկային ոլորտում օրենսդրական փոփոխությունների առաջնությունը: Դրանցից երկուսն արժանացել են խորհրդարանի առանձնահատուկ ուշադրությանը՝ կառավարության ցուցաբերած շտապողականության, նախաձեռնությունների մոտիվացիայի և նպատակների անորոշության պատճառով:

2015թ. մարտի 3-ին խորհրդարանն ընդունել է «Շահութահարկի մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրինագիծը՝ ձայների 68 կողմ, 11 դեմ, 23 ձեռնպահ հարաբերակցությամբ: Փաթեթին կողմ է քվեարկել «Հանրապետական» խմբակցությունը, ձեռնպահ՝ ԲՀԿ-ն ու ՀՅԴ-ն, դեմ՝ ՀԱԿ-ն ու «Ժառանգությունը»: ՕԵԿ-ը քվեարկությանը չի մասնակցել:

Օրենսդրական փոփոխության բովանդակությունն ու հիմնավորումները.
 Փոփոխությամբ շահութահարկի գծով արտոնյալ պայմաններ են նախատեսվում ՀՀ ռեզիդենտ հանդիսացող և արտահանման ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպությունների համար: Շահութահարկի դրույքաչափը 20%-ի փոխարեն 2% է սահմանվում այն կազմակերպությունների համար, որոնք բավարարում են 4 միաժամանակյա չափորոշիչների. ունեն կառավարության հավանությանն արժանացած արտահանման ծրագիր, հաշվետու տարվա ընթացքում արտահանել են առնվազն 50 մլրդ մաքսային արժեքով ապրանք, բանկային հաշիվներին մուտքագրել են առնվազն նույնքան գումար և եկամուտներ չեն ստացել Հայաստանում իրականացրած փոփոխության գործունեությունից: Նման արտոնության սահմանումը, ըստ կառավարության, ունի արտահանումը խթանելու նպատակ:

Տեղեկանք: 2015թ. մայիսի 7-ին խորհրդարանն ընդունել է «Եկամտային հարկի մասին» և «Շահութահարկի մասին» օրենքներում փոփոխություններ նախատեսող օրենսդրական փաթեթը՝ ձայների 68 կողմ, 14 դեմ, 16 ձեռնպահ հարաբերակցությամբ: Փաթեթին կողմ է քվեարկել «Հանրապետական» խմբակցությունը, դեմ ՀԱԿ-ը, ՕԵԿ-ն ու «Ժառանգությունը»: ԲՀԿ և ՀՅԴ խմբակցությունների պարզամավորները ձեռնպահ են եղել կամ չեն քվեարկել: Հանրության կողմից «խոպանջիների օրենք» անվանումը ստացած փաթեթն ընդունվեց հարուկ կարգով, մայիսի 5-ին կառավարության նախաձեռնությամբ հրավիրված արտահերթ նիստի ընթացքում: Առաջին և երկրորդ ընթերցմամբ քվեարկությունները կազմակերպվեցին 24-ժամյա ռեժիմով: Հապճեպ, միայն արտահերթ նիստի նախօրեին ներկայացվելու պարզապես փաթեթը ոչ միայն պարզաձև չքննարկվեց ԱԺ փոփոխության հարցերի մշտական հանձնաժողովում, այլև ներկայացվեց առանց իրավական փորձաքննություն մասին տեղեկանքների, որոնց կցումը նախագծերին օրենքի պահանջ է:

Փոփոխությունների բովանդակությունն ու հիմնավորումները. «Եկամտային հարկի մասին» օրենքում կատարված փոփոխությամբ 13 % եկամտային հարկի արտոնյալ ռեժիմ է սահմանվում ՀՀ տարածքից դուրս շինարարական եւ շինմոնտաժային աշխատանքների արտահանում կազմակերպող ռեզիդենտ ընկերությունների վարձու աշխատողների համար: Կառավարությունը փորձում է հասնել նրան, որ արտագնա աշխատանքի մեկնող ՀՀ այն քաղաքացիները, ովքեր շինարարության ոլորտում գործունեություն ծավալելու համար աշխատանքային պայմանագրեր են կնքում արտերկրյա կազմակերպությունների հետ և եկամտահարկ վճարում տվյալ երկրներում, շահագրգռված լինեն օրինական կերպով որպես աշխատողներ ձևակերպվել հայաստանյան կազմակերպություններում, իսկ նրանց եկամուտներից գանձվող եկամտահարկը մուտքագրվի ՀՀ պետություն: Այս դեպքում ոչ ռեզիդենտ կազմակերպությունների հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնում է ոչ թե արտագնա աշխատանքի մեկնող քաղաքացին, այլ այն տեղական կազմակերպությունը, որտեղ նա գրանցվում է իբրև վարձու աշխատող:

Օրենսդիրը հասավ նրան, որ կառավարությունը, ծրագրերը հաստատելիս կամ մերժելիս, պետք է առաջնորդվի իր կողմից մշակվելիք կարգով: Սակայն ԱԺ-ն չսահմանեց այդ չափորոշիչների հիմնական ու նվազագույն սկզբունքները՝ անաչառության, թափանցիկության երաշխավորման իմաստով:

Արտահանման մոնոպոլիզացիայի խնդիրը նախընտրական ծրագրերում

Քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում մենաշնորհացման, անհավասար մրցակցային պայմանների հիմնահարցը քննվում է ներմուծման, ներքին շուկայական հարաբերությունների, բայց ոչ արտահանման համատեքստում: Այս հարցում ծրագրային ընդհանրություններն արտացոլվել են խմբակցությունների քվեարկություններում, և չնայած դիտարկվող օրինագծերը երկու տարբեր նախաձեռնություններ են, խմբակցությունների քվեարկությունները յուրաքանչյուրի մասով գրեթե կրկնվել են: Ընդդիմությունը՝ ՀԱԿ-ը, «Ժառանգություն»-ը և ՕԵԿ-ը քվեարկել են դեմ, ԲՀԿ-ն և ՀՅԴ-ն՝ մասամբ ձեռնպահ, իսկ քաղաքական մեծամասնությունը ներկայացնող ՀՀԿ-ն՝ ԲՀԿ խմբակցության որոշ անդամների և անկախ պարզամավորների հետ միասին, կողմ: Օրինագծերն ընդունվել են բացառապես քաղաքական մեծամասնության գործադրած մոբիլիզացիոն ջանքերի շնորհիվ: Այս իրողությունը բացահայտում է նախաձեռնությունների իրական նպատակների նկատմամբ խորհրդարանական փոքրամասնության անվստահությունն ու մրավախությունները:

ՕԵԿ. Խորհրդարանական միակ ուժն է, որը նախընտրական ծրագրում հակամենաշնորհային քաղաքականությանն անդրադարձել է առանձին գլխով: Շեշտելով տնտեսվարողների համար հավասար պայմանների անհրաժեշտությունը՝ ՕԵԿ-ը որևէ գործնական առաջարկություն չի արել՝ մնալով նպատակային ծրագրերի միջոցով հարցերը լուծելու հռչակագրային ձևակերպումների սահմաններում: Խմբակցությունը 2 նախաձեռնություններին էլ դեմ է քվեարկել՝ հիմնականում պարզառաքանելով վերահսկողության բավարար մեխանիզմների բացակայությամբ: Քվեարկությունները համապատասխանում են արհեստական մենաշնորհների վերացման, աշխատատեղեր ստեղծելու միջոցով գործազրկության վերացման ծրագրային դիրքորոշումներին:

ՀՅԴ. Քվեարկել է դեմ և ձեռնպահ՝ հիմնավորմամբ, թե գործադիրը առաջնորդվել է բացառապես հարկային մուտքերն ավելացնելու նպատակով և անտեսել է սոցիալ-տնտեսական մյուս ասպեկտները: Այս նախաձեռնություններից բխող բոլոր ռիսկերը (զբաղվածության, տնտեսության մրցունակության, արտահանման վիճակի, վարձարության անբավարարության, ժողովրդագրական ձգնաժամի առումով) նախընտրական ծրագրում ամրագրել է որպես առաջնային մարտահրավերներ: ՀՅԴ-ն արտահանումը խթանող արդյունավետ մեխանիզմ է համարում հզոր տնտեսվարող սուբյեկտներին հարկային արտոնություններ տալը, սակայն պայմանով, որ դրանք լինեն արտադրական և ոչ միայն ապրանք տեղափոխող ձեռնարկություններ:

Այն հակասում է նաև արտահանման դիվերսիֆիկացման և խթանման նպատակով նպաստավոր պայմանների ձևավորման, արտահանման նոր շուկաներ ձեռք բերելու կառավարության՝ իր գործունեության ծրագրով սահմանված հանձնառությանը՝ հաշվի առնելով, որ արտոնությունները սահմանվում են արտահանումը միայն դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանելու կամ փարանցելու համար:

Աժ բյուջեային գրասենյակ

Տեղեկանք: 2015թ. մարտի 25-ին խորհրդարանն ընդունել է «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքում և հարակից ևս 2 օրենքերում փոփոխություններ նախատեսող օրենսդրական փաթեթը՝ ձայների 88 կողմ, 20 դեմ, 4 ձեռնպահ հարաբերակցությամբ: Փաթեթին կողմ է քվեարկել 4 խմբակցություն՝ ՀՀԿ-ն, ՀՅԴ-ն, ՕԵԿ-ը և «Ժառանգությունը»: ՀԱԿ-ն ու ԲՀԿ-ն դեմ են քվեարկել:

«Աժ կանոնակարգ» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելով օրենսդիրը նախաձեռնեց Աժ-ում բյուջեային գրասենյակ ստեղծելու գործընթացը: Նպատակն է բյուջեի նախագծի և կատարողականի, ինչպես նաև Վերահսկիչ պալատի փարեկան և ընթացիկ հաշվեպնդությունների վերաբերյալ պարզամավորներին և Աժ մշտական հանձնաժողովներին փորձագիտական աջակցություն ցուցաբերելու միջոցով ուժեղացնել ՀՀ բյուջեի կառավարման, դրանով պայմանավորված՝ կառավարության գործունեության նկատմամբ Աժ վերահսկողությունը:

Աշխատանքային խմբի կարգավիճակ ունեցող բյուջեային գրասենյակի համար սահմանվել են հետևյալ հիմնական գործառույթները՝ պետական բյուջեի համապարփակ, ինչպես նաև ճյուղային կամ ծրագրային ամփոփ նկարագրերի, տեղեկանքների պատրաստում, աջակցություն բյուջեի նախագծի վերաբերյալ պարզամավորների առաջարկությունների մշակմանը, բյուջեի կատարման ընթացքի մասին տեղեկատվության տրամադրում, եկամուտների և ծախսերի, ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների, պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների առցանց դիտարկումների անցկացում, պետական պարտքի, վարկային ծրագրերի, դրամաշնորհների վերաբերյալ պարզամավորների հարցումների և հարցապնդումների ձևակերպմանն աջակցում, ինչպես նաև Վերահսկիչ պալատի փարեկան կամ ընթացիկ հաշվեպնդությունների և եզրակացությունների վերաբերյալ տեղեկանքների տրամադրում:

Անկախության գործոնը և ռիսկերը

Տարբեր երկրներում նման գրասենյակներն ունեն գործառնության փարբեր նկարագրեր: Ի փարբերություն շատ այլ երկրների, որտեղ բյուջեային գրասենյակներն օժտված են նաև մակրո և միկրոտնտեսական ինստիտուցիոնալ վերլուծություններ կատարելու գործառնությով, Հայաստանի Աժ բյուջեային գրասենյակն օժտված է լինելու միայն մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու և տեղեկատվական աջակցություն ցուցաբերելու լիազորություններով:

Գրասենյակի սրբեղծումը կարող է լուծել 2 կարևոր խնդիր.

- ◆ ծրագրային բյուջեարավորման ինստիտուտի ներդրման համապեքստում փորձագետները կարող են բարձրացնել դրա առանձնահատկությունների վերաբերյալ պարզամավորների կոմպետենտության մակարդակը,
- ◆ Սահմանադրությամբ ԱԺ-ին վերապահված լիազորությունների շրջանակը ներառում է բյուջեի փարեկան վերահսկողություն իրականացնելու բավարար իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմներ, սակայն խորհրդարանը չունի բյուջեի կադարման ընթացիկ վերահսկողություն իրականացնելու արդյունավետ լծակներ: Բյուջեային գրասենյակների կողմից եռամսյակային ընթացիկ տեղեկանքների պարաստման պարականության սահմանումը ԱԺ-ին կարող է տալ այդ բացը լրացնելու հնարավորություն:

Փորձագիտական խմբի կողմից պետական բյուջեի նախագծի և բյուջեի կադարողականի մասին հաշվետվության ամփոփ նկարագրերի կամ սեղմագրերի պարաստումը պարզամավորների, խմբակցությունների և հանձնաժողովների համար հեշտացնում է այդ առանցքային նշանակության ծավալուն փաստաթղթերի հետ աշխատանքը: Սա ենթադրում է, որ ԱԺ բոլոր խմբակցությունների համար գրասենյակի գործունեության հանդեպ վստահության գործոնը լինելու է առաջնային: Չնայած սահմանվում է, որ պարզամավորների հարցումների հիման վրա անհարգելի պարճառով տեղեկանքներ, նկարագրեր, տեղեկատվություն չորամադրելը, ուշացնելը կամ ոչ հավաստի, ոչ ամբողջական տեղեկատվություն տրամադրելը հիմք է կարգազանց փորձագետին կարգապահական պարասխանատվության ենթարկելու համար, սակայն պարզ չէ դրա ընթացակարգը: Բյուջեային գրասենյակի արդյունավետության գրավականը ոչ միայն նրա մասնագիտացվածությունն ու փորձագիտական ներուժն է, այլև անաչառության սկզբունքով առաջնորդվելու հնարավորությունը, ինչն ուղղակիորեն կախված է գրասենյակի կարգավիճակային և գործառութային անկախության մակարդակից:

ԱԺ կանոնակարգը սահմանում է, որ գրասենյակն օժտված է գործառութային ինքնավարությամբ: Տվյալ դեպքում նկատի է առնվում ինքնավարությունը ԱԺ աշխատակազմից, քանի որ, ունենալով հանդերձ աշխատանքների ներքին համակարգման ազատություն, գրասենյակն ուղղակի կախվածության մեջ է ԱԺ ֆինանսավարկային և բյուջեային ոլորտի մշտական հանձնաժողովից, որն իրականացնում է գրասենյակի գործունեության ընդհանուր համակարգումը և մշտադիտարկումը: Գրասենյակը հաշվետու է այդ հանձնաժողովին, համակարգող փորձագետը կադարում է մշտական հանձնաժողովի նախագահի հանձնարարականները:

Պեղական պարտքի վերաձևակերպում

Տեղեկանք: 2015թ. հունիսի 23-ին խորհրդարանն ընդունել է «ՀՀ պեղական պարտքի մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրինագիծը՝ ձայների 63 կողմ, 23 դեմ, 2 ձեռնպահ հարաբերակցությամբ: Փաթեթին կողմ է քվեարկել միայն «Հանրապետական» խմբակցությունը: Օրինագիծը քննարկվել է հատուկ կարգով հունիսի 15-ին կառավարության նախաձեռնությամբ հրավիրված արտահերթ նստաշրջանի ընթացքում: Նախագիծն առաջին ընթերցմամբ ընդունվել է հունիսի 22-ին, երկրորդ ընթերցմամբ՝ հունիսի 23-ին:

Օրենսդրական փոփոխության բովանդակությունն ու հիմնավորումները. «Պեղական պարտքի մասին» օրենքում առաջարկվում է ընդամենը մեկ փոփոխություն՝ 2008թ. ընդունված օրենքի 5-րդ, 7-րդ, 8-րդ հոդվածներում «պեղական» բառը փոխարինել «կառավարության» բառով և պեղական պարտքը վերաձևակերպել որպես կառավարության պարտք: Փոփոխության արդյունքում պարտքի մեծության սահմանափակումները տարածվում են ոչ թե պեղական, այլ կառավարության պարտքի վրա: Այս անհրաժեշտությունը կառավարությունը բացատրում է բյուջեային գործընթացի շրջանակներում պեղական բյուջեի դեֆիցիտի առավելագույն սահմանաչափը հստակեցնելու անհրաժեշտությամբ:

Ըստ օրենսդրության՝ Հայաստանի պեղական պարտքը չի կարող գերազանցել ՀՆԱ-ի 60 %-ը, իսկ 50 %-ը գերազանցելու դեպքում բյուջեի պակասուրդը չի կարող գերազանցել ՀՆԱ-ի 3 %-ը: Գործադիրի հիմնավորմամբ՝ պեղական պարտքը վերաբերում է կառավարության գործողություններին, հետևաբար սահմանափակումները պետք է կիրառվեն միայն կառավարության պարտքի վրա և չվերաբերեն Կենտրոնական բանկին:

Արտաքին պարտքի խնդիրը՝ նախընտրական ծրագրերում

Խորհրդարանական քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում արտաքին պարտքի խնդիրն արտացոլված է ոչ այնքան որպես պետության սուցիալ-տնտեսական քաղաքականության առջև ծառայած հիմնական մարտահրավեր, որքան տնտեսական այլ գործոններից ածանցվող և ոչ այնքան ակտուալ խնդիր: 2012թ. Հայաստանի պեղական պարտքը կազմում էր 4.369 մլրդ դոլար կամ ՀՆԱ-ի 42,6%-ը: Խնդիրն այս ժամանակահատվածում ոչ այնքան պեղական պարտքի՝ օրենքով նախատեսված սահմանաչափը գերազանցելու ռիսկերի առաջացումն է, որքան 2009-ից կուտակման տեմպերի արագությունը:

Խորհրդարանական 6 ուժերից 3-ը՝ ՀՀԿ-ն, ՕԵԿ-ն ու «Ժառանգությունը», նախընտրական ծրագրերում պեղական պարտքի մեծության, դրա սպասարկման ազդեցության հիմնահարցերին ընդհանրապես չեն անդրադարձել:

ԲՀԿ-ն շեշտադրել է ոչ թե ՀՆԱ-ի մեջ արտաքին պարտքի տեսակարար կշռի փոքրացման, այլ՝ արտաքին փոխառությունների ներգրավման և օգտագործման թափանցիկության, վերահսկողական լծակներն ավելի կատարելագործելու անհրաժեշտությունը՝ շրջանցելով արտաքին պարտքի մեծության սահմանափակման հարցը:

ՀՅԴ-ի համար արտաքին պարտքի խնդիրն ակտուալ է ոչ այնքան դրա սպասարկման հնարավոր բարդությունների, որքան ֆինանսական շուկայի առողջացման, եկամտաբերության ապահովման համալրեքստում: Կուսակցությունն առաջ է քաշել այլ պետություններից և միազգային կազմակերպություններից ստացվող վարկային միջոցներն առանց փոկոսադրույքների բանկերին և վարկային կազմակերպություններին տրամադրելու գաղափարը:

Խորհրդարանական ուժերից միայն **ՀԱԿ**-ն է, որ դեռևս 2012թ. կանխատեսել է արտաքին պարտքի սպասարկման ռիսկերի խորացման միտումները՝ հանդես գալով պրագմատիկ և կոնկրետ առաջարկություններով, որոնք հակադրվում են վարվող քաղաքականությանը և ԱԺ-ի ընդունած օրենքի տրամաբանությանը: Կատարված փոփոխություններով ԿԲ-ին առանց սահմանափակումների արտաքին միջոցներ ներգրավելու արտոնություն է տրվում, մինչդեռ ՀԱԿ-ը համոզված է, որ այդ հարցում Կենտրոնական բանկի «ազատությունը» օրենսդրորեն պետք է սահմանափակել՝ կառավարությանը տալով ԿԲ-ի արտաքին պարտավորությունների վերահսկողության լծակներ: Ըստ ՀԱԿ դիրքորոշման՝ միայն կառավարությունը պետք է ունենա արտաքին միջոցներ ներգրավելու իրավասություն: Այս տեսանկյունից օրինագծին խմբակցության դեմ քվեարկությունը լիարժեքորեն բխում է ծրագրային այս դրույթից:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ

Ազդեցություն և արդյունավետություն

Խորհրդարանական լսումների ձևաչափով ապահովվում է հանրության մասնակցությունն ու ազդեցությունը օրենսդրական գործունեությանը: Լսումների նպատակն է հանրային կարևորության խնդիրները կարգավորող օրենքների կամ դրանց սկզբունքների նախագծման պրոցեսում ապահովել արդյունավետ հաղորդակցություն խորհրդարանի, պետական այլ կառույցների և հանրային-փորձագիտական շրջանակների միջև:

Լսումների ինստիտուտը կարգավորվում է «ԱԺ կանոնակարգ» օրենքով և ԱԺ մշտական հանձնաժողովների կանոնակարգերով, համաձայն որոնց՝ լսումների անցկացումը մշտական հանձնաժողովների գործառույթներից մեկն է: «ԱԺ կանոնակարգ» օրենքով սահմանվում է, որ մշտական հանձնաժողովները պարտավոր են յուրաքանչյուր նստաշրջանի ընթացքում առնվազն 1 լսում կազմակերպել իրենց վերապահված ոլորտներին առնչվող հարցերի շուրջ: Հանձնաժողովներն ազատ են ոչ միայն քննարկման ներկայացվող հարցերի ընտրության, լսումների ընթացակարգերի որոշման, այդ թվում՝ լսումները բաց կամ փակ անցկացնելու, այլ նաև համապետել լսումներ նախաձեռնելու հարցերում:

Տեղեկանք: 5-րդ գումարման ԱԺ 7-րդ նստաշրջանի ընթացքում 12 մշտական հանձնաժողովներից օրենքի՝ առնվազն մեկ լսում անցկացնելու պահանջը կատարել է միայն 8-ը. պետաիրավական հարցերի հանձնաժողովը (2), պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի հանձնաժողովը (2), առողջապահության, մայրության և մանկության հարցերի հանձնաժողովը (1), տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի հանձնաժողովը (1), փոստային (1), ֆինանսավարկային և բյուջեփոխան (1), արտաքին հարցերի մշտական հանձնաժողովը (1), եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը (1):

Լսումներ չի հրավիրել 4 հանձնաժողով՝ սոցիալական, գիտության և կրթության, գյուղատնտեսական և բնապահպանական, մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովները: Նրանց կողմից օրենքի պահանջը չկատարելու որևէ հիմնավորում չի ներկայացվել:

Նստաշրջանի ընթացքում առնվազն 1 լսում հրավիրելու պայմանը, մի կողմից, թույլ չի տալիս հետադարձ կապ ապահովող այս արդյունավետ ձևաչափը կիրառել կամայականորեն, մյուս կողմից՝ տալիս է խորհրդարանական լսումները ձևականացնելու և ինքնանպատակ դարձնելու հնարավորություն, քանի որ մեծանում է օրենքի պահանջի կատարման ձևական կողմն ապահովելու, ոչ այնքան կարևոր, երկրորդական հարցերի շուրջ լսումներ հրավիրվելու ռիսկը: Նստաշրջանի ընթացքում հրավիրված լսումներից թերևս առավել արդարացված և նպատակային էին ԱԺ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի կազմակերպած երկու լսումները՝ «2015թ. հունվարի 12-ին Գյումրիում տեղի ունեցած ողբերգական դեպքերի հետ կապված իրավական գործընթացների մասին» և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի նախագծի վերաբերյալ, ինչպես նաև՝ ԵՄ Արևելյան գործընկերության Ռիգայի գագաթաժողովին ընդառաջ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի հրավիրած լսումները:

Մինչդեռ, օրինակ, առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնած՝ բժշկական մասնագիտացման և բժշկական ինքնուրույն մասնագիտական գործունեության միջազգային փորձին վերաբերող լսումների նպատակահարմարությունն այնքան էլ հասկանալի չէր, եթե նկատի ունենանք հանձնաժողովի այն հիմնավորումը, թե լսումները հրավիրվել են շահագրգիռ կողմերին ուղորդի վերջին զարգացումներին ծանոթացնելու նպատակով: Կամ՝ փնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը լսումներ է կազմակերպել էլեկտրաէներգիայի սակագնի վերանայման հիմնավորվածությունը քննարկելու նպատակով այն ժամանակ, երբ արդեն հստակ էր ոչ միայն սակագնի բարձրացման անխուսափելիությունը, այլև դրա կոնկրետ ժամկետներն ու բարձրացման չափը:

Ընդհանուր դիտարկումը թույլ է տալիս առանձնացնել լսումների ինստիտուտի արդյունավետության վրա ազդող հետևյալ հիմնահարցերը.

- ◆ Որոշ դեպքերում լսումների ինստիտուտը կիրառվում է ոչ թե որպես կարևոր օրինագծերը քննարկելու հարթակ, այլ որպես արդեն կայացված որոշումների անխուսափելիությունը ներկայացնելու, հիմնավորելու հնարավորություն: Օրինակ՝ 6-րդ նստաշրջանում «Եվրասիական փնտեսական միության մասին» պայմանագրին միանալու հարցի շուրջ փնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը լսումներ հրավիրեց միայն պայմանագրի վավերացման նախօրյակին, կամ՝ 7-րդ նստաշրջանում նույն հանձնաժողովը հրավիրեց լսումներ էլեկտրաէներգիայի սակագնի վերանայման հիմնավորվածությունը քննարկելու նպատակով, մինչդեռ արդեն հայտնի էր, թե երբ ու որքանով է սակագինը բարձրանալու: Այս օրինակները նաև ցույց են տալիս, որ հաճախ լսումները կազմակերպվում են ոչ այնքան հանրային հնչեղություն ստացած խնդիրներն իրապես քննարկելու, լուծումներ գտնելու ու առաջարկելու, որքան դրանց շուրջ ձևավորված հանրային լարվածությունը թուլացնելու նպատակով:
- ◆ Լսումների ազդեցության կամ արդյունավետության իրական մակարդակը գրեթե չափելի չէ, չկան մշակված չափորոշիչներ պարզելու, թե որքանով են լսումների ժամանակ հնչած մասնագիտական դիտողություններն ու առաջարկությունները հաշվի առնվում օրինագծերի բարեփոխման ընթացքում: Գործնականում լսումների ֆունկցիոնալ նշանակությունը սահմանափակվում է միայն մտքերի փոխանակմամբ ու կարծիքների բազմազանության ապահովմամբ:

Մինչդեռ «Աժ կանոնակարգ» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետը սահմանում է, որ հանձնաժողովը կարող է նախապարաստել լսումների արդյունքներն ամփոփող նյութեր (լսումների թեմայի վերաբերյալ ներկայացված գրավոր ելույթներ, առաջարկություններ, եզրակացություններ, տեղեկանքներ եւ այլ տեղեկություններ), որոնք կարող են հրապարակվել հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի նախագահի համաձայնությամբ: Այսինքն՝ Աժ կանոնակարգն ապահովում է լսումների արդյունքները գնահատելու, վերլուծելու նվազագույն հնարավորությունը: Սակայն քանի որ այդ գործառնության իրականացումը ոչ թե պարտադիր, այլ հայեցողական բնույթ ունի, նման նյութեր կամ չեն պարաստվում, կամ չեն հրապարակվում: Աժ պաշտոնական կայքէջում մշտական 12 հանձնաժողովներից որևէ մեկի բաժնում նման նյութեր զերեղված չեն:

ԷԹԻՎԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Աժ Էթիկայի հանձնաժողովը 7-րդ նստաշրջանի ողջ ընթացքում ոչ մի դիմում չի ստացել, նիստ չի գումարել և որոշում չի ընդունել: Սա խորհրդարանում Էթիկայի հանձնաժողովի ստեղծումից հետո առաջին դեպքն է:

Իրավիճակը, սակայն, օրինաչափ է նախորդ նստաշրջաններում Էթիկայի հանձնաժողովի գործունեության արդյունավետության ցուցանիշների համեմատությամբ. դիմումների վիճակագրությունը բացահայտում է նվազման ընդգծված դինամիկա:

Մասնավորապես, Աժ 5-րդ գումարման 2-րդ նստաշրջանում հանձնաժողովն ստացել է 13 դիմում, 3-րդում՝ 6, 4-րդում՝ 2, 5-րդում՝ 3 դիմում: Նախորդ՝ 6-րդ նստաշրջանում Էթիկայի ժամանակավոր հանձնաժողովն ստացել է ընդամենը 1 դիմում, որը, սակայն, վարույթ չի ընդունել: Հետևաբար, 7-րդ նստաշրջանում դիմումների բացակայությունը փաստում է Էթիկայի հանձնաժողովի՝ վերջնականապես անգործության մարմնվելու, որպես պարզամավորների էթիկական և շահերի բախման հետ կապված հարաբերությունների կարգավորման միակ ինստիտուտի՝ ձևական բնույթ ստանալու իրողությունը:

Իրավիճակին նպաստող գործոնները (փորձագիտական վերլուծություն)

- ◆ 5-րդ գումարման սկզբում Էթիկայի հանձնաժողովին ներկայացվող դիմումների առաքությունը վկայում էր նոր ինստիտուտի նկատմամբ հանրային հետաքրքրության բարձր մակարդակի մասին: Դիմումների մեծամասնությունը վերաբերում էր Աժ քաղաքական մեծամասնությունը ներկայացնող պարզամավորների վարքագծին: Այս հանգամանքը մեծամասնությանը մղեց «Աժ կանոնակարգ» օրենքում կարարելու այնպիսի փոփոխություններ, որոնք փոխում էին հանձնաժողովի ձևավորման սկզբունքները և առնվազն հավասարակշռում քաղաքական մեծամասնության և ոչ իշխանական խմբակցությունների ներկայացուցիչների քվեները: Այս դիրքորոշումը, ինչպես նաև քվեարկությունների ժամանակ քաղաքական պրոյեկցիայի սկզբունքով առաջնորդվելու նկատմամբ դրսևորումները հանգեցրին հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու հարցում ոչ իշխանական ուժերի շահագրգռության կտրուկ անկմանը, իսկ ՀԱԿ խմբակցությունն Էթիկայի հանձնաժողովի գործունեությունը բոյկոտեց ընդհանրապես:
- ◆ Հանձնաժողովի կողմից դիմումների քննության ընթացքը, ինչպես նաև դրանց մեծ մասը հետևողականորեն վարույթ չընդունելը թույլ են տալիս եզրակացնել, որ դրսևորվել է Էթիկայի խախտումների ապացուցողական բազան հնարավորինս նեղացնելու, դրանով հանձնաժողովին դիմելու շահագրգռությունն ու առիթները սահմանափակելու միտում: Պետք է նկատել, սակայն, որ որոշ դեպքերում դիմումները վարույթ չընդունելու որոշումները եղել են արդարացված՝ դրանցում բարձրացված հարցերի՝ Էթիկայի հանձնաժողովի իրավազորությունից դուրս լինելու, հանձնաժողովի գործառույթներից դիմումատուների ցածր իրազեկվածության կամ սխալ պարկերացումների պատճառով:

Սակայն հանրային հնչեղություն սրապած առանձին գործերով դիմումներում ներկայացված հիմնավորումները անտեսելու կամ դրանց նկատմամբ ընտրողական-կամայական վերաբերմունք ցուցաբերելու հանգամանքը հանգեցրել են հանձնաժողովի նկատմամբ հանրային վստահության էական անկման:

Դրա մասին է վկայում նաև այն, որ 2012թ. մայիսի 31-ից մինչև 2014թ. սեպտեմբերի 8-ը ԱԺ էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովն ընդհանուր առմամբ կայացրել է 23 որոշում, որոնցից 8-ը կամ 32%-ն է եղել քննարկում սկսելու մասին, և միայն 3-ի դեպքում է հանձնաժողովն ընդունել խախտում արձանագրող որոշումներ:

- ◆ Նկատվել են էթիկայի նորմերի խախտման փաստերն արձանագրող որոշումները հրապարակայնացնելուց խուսափելու ակնհայտ միտումներ: Դրա հիմնական դրսևորումներից մեկը էթիկայի կանոնների խախտման մասին հանձնաժողովի որոշումներն ընդամենը թղթե կրիչով պարզամավորներին բաժանելն է: Մինչդեռ ԱԺ կանոնակարգ օրենքը հստակ սահմանում է, որ էթիկայի հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները հրապարակում է Ազգային ժողովի հեթական նստաշրջանի առաջիկա չորսօրյա նիստերում, որից հետո դրանք տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական կայքէջում: Օրենսդրության պահանջների մասնակի կատարումը կամ դրանց յուրովի մեկնաբանումը կարելի է բնութագրել որպես խախտում թույլ տված պարզամավորի վրա բարոյական պարսավանքի ազդեցությունը և դրա հանրայնացման հնարավորությունները նվազեցնելու փորձ:
- ◆ Տարբեր նստաշրջաններում հանձնաժողովի կայացրած որոշումները որևէ էական ազդեցություն չեն թողնում: Պատճառն այն է, որ այդ խախտումների բացահայտումները, բարոյականից բացի, որևէ իրավական, ֆինանսական, կարգապահական, վարչական հետևանք չեն առաջացնում: Բացառություն է Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի (պարզամավորի՝ ձեռնարկարկրական գործունեությամբ զբաղվելու, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում այլ պաշտոն զբաղեցնելու սահմանափակում) պայմանները խախտելու փաստի արձանագրումը, որը կարող է հանգեցնել պարզամավորի լիազորությունների դադարման:
- ◆ Հանձնաժողովի անդամներն օժտված չեն իրենց գործընկերների կողմից էթիկայի նորմերի կամ շահերի բախման կանոնակարգումների խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու նախաձեռնությամբ հանդես գալու իրավասությամբ: Օրենսդրական այս բացը հնարավորություն չի տալիս հանձնաժողովի անդամներին ինքնուրույն խթանել էթիկայի հանձնաժողովի գործունակությունն ու արդյունավետությունը: Որպես պարզամավորներ՝ նրանք ԱԺ էթիկայի հանձնաժողովին կարող են դիմել բացառապես իրենց վերաբերող, օրենսդրորեն սահմանված կոնկրետ հարցերի շրջանակում:

Ժամանակակից պառլամենտարիզմի առանցքային բաղադրիչներից մեկը հանդիսացող ինստիտուտը կայանալու, զարգանալու, խորհրդարանական գործունեության մասնիկը դառնալու փոխարեն ձախողվում է՝ վերածվելով անգործունակ, իմաստազուրկ, ավելորդ օղակի:

Զգալի է հանձնաժողովի կարգավորիչ դերակատարությունը բարձրացնելու, նրա որոշումների գործնական ազդեցությունը մեծացնելու և խախտումների արձանագրման դեպքերում որոշակի կարգապահական հեղուկներ նախատեսելու մասով օրենսդրական փոփոխություններ և լրացումներ կատարելու կամ այս ուղղությամբ հանրային քննարկումներ կազմակերպելու անհրաժեշտությունը:


ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ և ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԱՐՏԱԿ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

ՀՀ ԱԺ-ն փոփոխություններ է կատարել «Պեղական պարտքի մասին» ՀՀ օրենքում¹, ինչի արդյունքում պարտքի մեծության սահմանափակումները փարածվում են ոչ թե պեղական², այլ կառավարության պարտքի վրա: Փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը կառավարությունը բացատրել է բյուջետային գործընթացի շրջանակներում պեղական բյուջեի դեֆիցիտի առավելագույն սահմանաչափը հստակեցնելու անհրաժեշտությամբ:

Պեղական պարտքն աճում է 2009թ. ի վեր (տես պատկեր 1): Դրա մեծությունը չի գերազանցում օրենքով նախատեսված սահմանափակումը, բազմաթիվ այլ երկրների պարտքային ցուցանիշների համեմատությամբ մեծ ռիսկեր չի ստեղծում և ենթադրելի էր, որ մրահոգության առարկա չպետք է հանդիսանա:

Պատկեր 1. ՀՀ պեղական պարտքի բացարձակ և հարաբերական մեծությունները 1999-2014թթ.



Աղբյուր. Տարբեր տարիների պեղական բյուջեների կատարման և պեղական պարտքի վերաբերյալ հաշվետվություններ
 Ձախ առանցք՝ մլրդ դրամ, աջ առանցք՝ ՀՆԱ փոկոս

¹Հայաստանի Հանրապետության օրենքը «Պեղական պարտքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին: ՀՕ-97-Ն: Ընդունված է 2015թ. հունիսի 23-ին:
²Պեղական պարտքը ներառում է նաև ՀՀ Կենտրոնական բանկի պարտքը:

Ինչու՞ կառավարությունը հիմա որոշեց փոփոխել օրենքով նախատեսված սահմանափակումը

«Պետական պարտքի մասին» օրենքը սահմանափակում է կառավարության պարտքի մեծությունը³: Եթե կառավարության պարտքը գերազանցում է համախառն ներքին արդյունքի (այսուհետ՝ ՀՆԱ) 50 %-ը, «ապա հաջորդ փարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի վերջին երեք փարիների ծավալների միջին ցուցանիշի 3 %-ը»: Չնայած օրենքի համաձայն պարտքը չպետք է գերազանցի ՀՀ նախորդ փարվա ՀՆԱ 60 %-ը, հստակ չէ, թե ինչ պետք է անել, եթե դա տեղի ունենա, քանի որ կառավարության պարտքը կարող է գերազանցել սահմանված ցուցանիշը ոչ միայն նոր գործարքների կնքման, այլ նաև ազգային արժույթի արժեզրկման կամ ՀՆԱ կտրուկ նվազման արդյունքում:

ՀՀ Կենտրոնական բանկի պարտքը

Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) պարտքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» օրենքով⁴: Օրենքի համաձայն՝ Կենտրոնական բանկի պարտքի կառավարումն իրականացվում է «վճարային հաշվեկշռի կարգավորման, դրամավարկային քաղաքականության իրականացման և ֆինանսական կայունության ապահովման նպատակով»:

Պետական պարտքի մեծության վրա տարածվող սահմանափակումը միայն կառավարության պարտքի վրա տարածելն ավելացնում է Կենտրոնական բանկի պարտք ներգրավելու հնարավորությունները: Մրահոգության առարկա կարող է հանդիսանալ առանց սահմանափակումների պարտք ներգրավելու ԿԲ իրավունքի դե յուրե ամրագրումը: Փաստացի, ԿԲ-ն մինչև հիմա էլ կարող էր անսահմանափակ պարտք ներգրավել՝ դա հիմնավորելով իր անկախությամբ և իր հիմնական խնդիրը լուծելու անհրաժեշտությամբ⁵:

Պարտքի մեծության սահմանափակման միջազգային փորձը

Պարտքի հանդուրժելի մեծության ցուցանիշները տարանվում են երկրից երկիր: Չնայած զարգացած երկրների մի մասի պարտքը գերազանցում է ՀՆԱ 70 կամ նույնիսկ 90 %-ը (պատկեր 2), սակայն ֆինանսական շուկաները մրահոգված չեն այդ երկրների պարտքի կայունությամբ: Վերջին փարիներին եղել են դեպքեր, երբ Գերմանիայի, Ֆրանսիայի և մի շարք առաջատար այլ երկրների որոշ ժամկետայնության պետական պարտատուների եկամտաբերությունները եղել են բացասական: Միևնույն ժամանակ, որոշ մասնագետների կարծիքով⁶, կան արտաքին պարտք չհանդուրժող երկրներ, որոնց պետական պարտքը չպետք է գերազանցի համախառն ազգային արդյունքի 15 կամ 20 %-ը, և դա կախված է այդ երկրների դեֆոլտների և սղաճի պատմությունից:

³ Մինչև վերջին փոփոխությունները սահմանափակումները տարածվում էին պետական պարտքի վրա:


⁴ Ընդունված է Ազգային ժողովի կողմից 1996թ. հունիսի 30

⁵ «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի հոդված 4.

⁶ Carmen M. Reinhart, Kenneth S Rogoff, Miguel A. Savastano. (2003). Debt Intolerance. National Bureau of Economic Research Working Paper #9908. <http://www.nber.org/papers/w9908.pdf>

Պեղական պարտքի մասին վերլուծություններում հաճախ անդրադարձ է կատարվում միջազգային փորձին: Մասնագետների ուշադրությունը հատկապես կենտրոնանում է Եվրամիության (այսուհետ՝ ԵՄ) անդամ երկրների օրենքների և նրանց ստորագրած համաձայնագրերի վրա: Պեղական պարտքի կոնտրեստում ԿԲ դերի մասին խոսելիս մասնագետները հիմնականում անդրադառնում են ԿԲ կողմից կառավարությանը վարկեր փրամադրելու և պարտքի կառավարման գործում ԿԲ, որպես գործակալներ գրավելու դերին: ԿԲ պարտքը պեղական պարտքում հաշվառելու խնդիրն ավելի քիչ է ուսումնասիրված:

Պատկեր 2. Պեղական պարտքի մեծությունները եվրոպական երկրներում (ՀՆԱ փոկոս)



Աղբյուր. Եվրոստատ

Պեղական պարտքի վերաբերյալ ԵՄ համաձայնագրերն ու օրենքներն անդրադառնում են կառավարության (government) կամ պեղական (public) պարտքին, հաճախ նույնականացնելով այդ հասկացությունները: Եվրոն որպես արժույթ ընդունած ԵՄ անդամ երկրների ԿԲ-ներն, ըստ էության, պարտք ներգրավելու անհրաժեշտություն չունեն: Սեփական արժույթները պահպանած ԵՄ անդամ երկրներում, ԿԲ-երի արտարժույթային պահուստների համալրման անհրաժեշտության դեպքում այդ միջոցները կամ ներգրավում է կառավարությունը և դրանք փոխանցում է ԿԲ-ին (Դանիայում) կամ ներգրավում է ինքը՝ ԿԲ-ն (Շվեդիայում):

Խնդրի ուսումնասիրության նպատակով հետազոտվել են մի շարք երկրների պետական պարտքին վերաբերող օրենքներ: Պետական պարտքի մասին Մակեդոնիայի օրենքի համաձայն⁷ պետական պարտքը ներառում է կառավարության, նրա կողմից ստեղծված հաստատությունների և համայնքների պարտքը, և չի ներառում պետական ընկերությունների, պետության կամ համայնքների սեփականություն հանդիսացող ընկերությունների և Մակեդոնիայի ազգային բանկի պարտքը⁸: Վերջինիս պարտքի վերաբերյալ տվյալներն օգտագործվում են միայն վիճակագրական նպատակով:

Պետական պարտքի վրա տարածվող սահմանափակումը չի ներառում Ազգային բանկի պարտքը:

Պետական պարտքի մասին Պորտուգալիայի⁹, Կիպրոսի և Բուլղարիայի¹⁰ օրենքներն անդրադառնում են միայն կառավարության պարտքին և չեն սահմանում պարտքի սահմանային մեծություններ (հավանաբար, քանի որ սահմանափակումն առկա է ԵՄ համաձայնագրերում): Պարտքի մեծությունը սահմանափակող դրույթը բացակայում է նաև Սերբիայի պետական պարտքի մասին օրենքի¹¹, որը տարածվում է կենտրոնական և տարածքային իշխանությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, առողջապահական և կենսաթոշակային հիմնադրամների և աշխատաշուկայի գործակալության կողմից ներգրավված պարտքերի վրա:

Մավրիտանիայի պետական պարտքի կառավարման մասին օրենքը¹² պետական պարտքը սահմանափակում է ՀՆԱ 60 %-ի չափով, որի մեջ չեն մտնում կենտրոնական բանկի, պետական բանկերի և ապահովագրական ընկերությունների, սուպիլական ապահովության և նման այլ կառույցների կողմից ներգրավված պարտավորությունները: Այսպիսով, մի շարք երկրների օրենսդրությունների ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ պետական պարտքի մեծության վրա տարածվող սահմանափակումները հիմնականում չեն տարածվում կենտրոնական բանկի պարտքի վրա:

⁷ Public debt law (“Official Gazette of Republic of Macedonia” no.62/05), Decision of the Constitutional court U.no.49/2006-0-0 (“Official Gazette of Republic of Macedonia” no.137/06), Law on modifications and amendments to the Law on public debt (“Official Gazette of Republic of Macedonia” no.88/08), and Law on modifications and amendments to the Law on public debt (“Official Gazette of Republic of Macedonia” no.35/11).

⁸ Բաղկացած է դրամավարկային քաղաքականության իրականացման, վճարային հաշվեկշռի աջակցության համար ներգրավված և այլ պարտավորություններից

⁹ General System Governing the Issue and Management of Public debt Law No. 7/98 of 3 February (changed by Law n. 87-B/98, of 31 December, article 81st)

¹⁰ Government Debt Act Promulgated, State Gazette No. 93/1.10.2002, amended SG No. 34/19.04.2005, effective 1.06.2005, amended and supplemented, SG No. 52/29.06.2007, effective 1.11.2007, SG No. 23/27.03.2009, effective 1.11.2009, SG No. 101/28.12.2010, effective 30.06.2011, amended, SG No. 99/16.12.2011, effective 1.01.2012, amended and supplemented, SG No. 103/28.12.2012, amended, SG No. 15/15.02.2013, effective 1.01.2014

¹¹Public Debt Law

¹²A Consolidated version of the Public Debt Management Act No. 5 of 2008 [Amended 14/2009, 10/2010, 36/2011, 38/2011, 26/2012]

Օրենքի ընդունման արդյունքում հնարավոր զարգացումները

Օրենքում նման փոփոխությունը հիմնավորվում է բյուջեի դեֆիցիտի առավելագույն սահմանաչափը հստակեցնելու անհրաժեշտությամբ: Բյուջեի դեֆիցիտի առավելագույն մեծությունը սահմանվում է «Բյուջեարային համակարգի մասին» օրենքով¹³, որի համաձայն այն չի կարող գերազանցել ՀՆԱ-ի 7.5 %-ը: Ընդ որում, եթե 1997թ. ընդունված «Բյուջեարային համակարգի մասին» օրենքով սահմանվում էր, որ «Բյուջեարային փարվա պետական բյուջեի դեֆիցիտը չի կարող գերազանցել փյալ փարվա համախառն ներքին արդյունքի 10 %-ը», ապա 2003թ. խմբագրման¹⁴ արդյունքում սահմանվել է, որ «առաջիկա փարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագծում պետական բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը) չի կարող գերազանցել կառավարության բյուջեարային ուղերձում նշված առաջիկա փարվա համախառն ներքին արդյունքի 5 %-ը», իսկ 2009թ.¹⁵ «5%»-ը փոխարինվել է «7.5%»-ով: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ եթե դեֆիցիտի առավելագույն մեծության սահմանաչափի փոփոխությունը կարող է ուղղակի ազդեցություն ունենալ պարտքի մեծության աճի տեմպերի վրա, ապա պարտքի մեծության սահմանափակման միջոցով դեֆիցիտի վրա ազդեցությունն անուղղակի է:


Նախագծին կից ներկայացվող եզրակացություններում նշվում է, որ նախագիծը կունենա չեզոք ազդեցություն կամ ազդեցություն չի ունենա սոցիալական պաշտպանության, առողջապահության, շրջակա միջավայրի, կոռուպցիայի, ապրանքային շուկայում մրցակցային դաշտի, փոքր և միջին ձեռնարկատիրական բնագավառի, գործարար և ներդրումային միջավայրի, համայնքային և պետական բյուջեների վրա:

Պետական պարտքն արդեն իսկ մեծ ազդեցություն է ունենում փարբեր ոլորտներում պետության կողմից վարվող քաղաքականությունների վրա, քանի որ պարտքի գծով վճարումները (մայր գումարների և տոկոսների) մեծ գումարներ են կլանում պետական բյուջեից՝ նվազեցնելով այլ ոլորտներում ներդրումներ կատարելու, մատուցվող ծառայությունների որակը բարելավելու կամ շահառուների շրջանակն ընդլայնելու հնարավորությունները: Եթե 2007թ. պետական բյուջեի ծախսերում առողջապահության ծախսերը 4 անգամ գերազանցում էին պետական պարտքի սպասարկման ծախսերը, ապա համաձայն ՀՀ կառավարության 2016-2018թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի¹⁶ 2016թ. պետական պարտքի սպասարկման ծախսերն ավելի քան 10 միլիարդ դրամով կգերազանցեն առողջապահության ծախսերը, իսկ հետագա փարիներին այդ փարբերությունը կլինի ավելի մեծ (պատկեր 3): Միջնաժամկետ ծախսային ծրագրերում արտաքին պարտքի գծով վճարումները հաշվարկելիս կառավարությունն օգտագործում է փյալ պահին ՀՀ ֆինանսական շուկայում ձևավորված փոխարժեքը, իսկ 2018թ. պետական բյուջեի հաշվարկների ժամանակ կօգտագործի 2017թ. հոկտեմբերին ձևավորված փոխարժեքը, որը կարող է զգալիորեն փարբերվել ծրագրում օգտագործված փոխարժեքից: Եթե այս ընթացքում ազգային արժույթն արժեզրկվի, ապա կավելանան պետական պարտքի գծով վճարվելիք տոկոսների մեծությունները, ինչի արդյունքում անհրաժեշտություն կառաջանա կրճատել այլ ոլորտներ ուղղվող միջոցների ծավալը: Տոկոսավճարների մեծությունները կավելանան նաև նոր պարտքերի ներգրավման, ինչպես նաև ավելի բարձր տոկոսադրույքներով պարտք ներգրավելու արդյունքում:

¹³ «Բյուջեարային համակարգի մասին» ՀՀ օրենքի (1997թ. հունիսի 24-ի ՀՕ-137 օրենք) հոդված 12:
¹⁴ 2003թ. մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության բյուջեարային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-541-Ն օրենք:
¹⁵ 2009թ. հունիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության բյուջեարային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-133-Ն օրենք:
¹⁶ Զննարկվել է ՀՀ կառավարության 2015թ. Հուլիսի 8-ի նիստում և հասանելի է www.e-gov.am կայքից:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ եթե մինչև 2013թ. միջնաժամկետ ծախսային ծրագրերով նախատեսված պետական պարտքի գծով փոկոսավճարների գումարները գերազնահատվում էին, ապա 2014-2015թթ. պարտքի փոկոսավճարների գծով կանխատեսումները թերազնահատվել են (տես աղյուսակ 1): 2014թ. կառավարությունն արդեն իսկ ավելի շատ միջոցներ է հատկացրել, քան նախատեսում էր այդ ծրագրերով, իսկ 2015թ. այդ ծրագրերում նշված թվերի համեմատ ավելի շատ է նախատեսել:

Պատկեր 3. 2007-2014թթ.-ին ՀՀ պետական բյուջեում կրթության, առողջապահության և պետական պարտքի սպասարկման (փոկոսավճարներ) հետ կապված ծախսերի տեսակարար կշիռը և 2015-2018թթ. ծրագրային ցուցանիշները



Աղբյուր. 2007-2014թթ. ՀՀ պետական բյուջեի կապարման վերաբերյալ հաշվետվություններ, 2015թ. պետական բյուջե և 2016-2018թթ. միջնաժամկետ ծախսային ծրագիր

Աղյուսակ 1. Միջնաժամկետ ծախսային ծրագրերով կառավարության պարտքի դիմաց վճարվելիք տոկոսավճարների կանխադեսումները և փաստացի ցուցանիշները (մլրդ դրամ)

	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
ՄԺԾԾ2011-2013թթ.	50.3	54.7	57.7					
ՄԺԾԾ2012-2014թթ.		46.7	47.8	50.7				
ՄԺԾԾ2013-2015թթ.			50.7	55.5	60.8			
ՄԺԾԾ2014-2016թթ.				54.2	60.0	66.0		
ՄԺԾԾ2015-2017թթ.					72.6	77.5	83.7	
ՄԺԾԾ2016-2018թթ.						92.8	99.0	103.8
Փաստացի հարկայված	35.5	40.6	46.7	61.6	73.9+			

Աղբյուր. տարբեր տարիների միջնաժամկետ ծախսային ծրագրեր, պետական բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվություններ, 2015թ պետական բյուջե

Եզրակացություն

Վերջին տարիներին պետական պարտքի կտրուկ աճը մտահոգիչ է: 2014թ. հրապարակված «Պետական պարտքի կառավարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին ընդունված քաղաքական որոշումները և դրանց հետևանքները» հոդվածում առաջարկվում է պարտքի կայունության հետևյալ սահմանումը.

«Պետական պարտքը կայուն է, եթե կառավարությունն ի վիճակի է առանց իր կողմից տարվող տնտեսական և ֆինանսական քաղաքականության մեջ նշանակալից բացասական փոփոխություններ կատարելու ժամանակին և ամբողջ ծավալով կատարել պարտքի դիմաց վճարումները: Այս համարեքստում տնտեսական և ֆինանսական քաղաքականության մեջ բացասական փոփոխություններ են համարվում նրանք, որոնց արդյունքում բարձրացվում են հարկային դրույքաչափերը ներմուծվում են նոր հարկեր, բարձրացվում են պետության կողմից կարգավորվող հանրային ծառայությունների գները, կառավարության ռազմավարական ծրագրերով նախատեսված կամ բնակչությանը նորմալ ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ ծավալներով պետական ֆինանսական միջոցներ չեն ուղղվում համապատասխան ոլորտներ (օրինակ՝ առողջապահություն, կրթություն, այլ)»:

¹⁷ Արտակ Զյուրումյան. (2014). Պետական պարտքի կառավարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին ընդունված քաղաքական որոշումները և դրանց հետևանքները (հասու է <http://www.osf.am/wp-content/uploads/2014/10/Debt-Management-A-Kyurumyan.pdf> կայքում)

Վերջին երկու տարիներին հանրային ծառայությունների սակագների բարձրացումները վկայում են, որ կառավարությունը փորձում է նախկինում վերցրած վարկերի հետ կապված վճարումների բեռը կամ դրա մի մասը փոխանցել սպառողներին և հարկատուներին: Ակնհայտ է, որ առաջիկա տարիներին պետական պարտքի գծով վճարումներն ավելի մեծ ծավալով միջոցներ են կլանելու պետական բյուջեից և նվազեցնելու են այլ ոլորտներում ներդրումներ կատարելու, մատուցվող ծառայությունների որակը բարելավելու կամ շահառուների շրջանակն ընդլայնելու հնարավորությունները:

Օրենսդրական վերջին փոփոխությունը կառավարությանը ավելի շատ վարկային միջոցներ ներգրավելու հնարավորություն է տալիս: Պետք է հիշել, որ այսօր ներգրավված միջոցները վաղը դառնում են ծախս և նվազեցնում են ֆինանսական միջոցներն այլ, այդ թվում զարգացման ծրագրերի ֆինանսավորման նպատակով օգտագործելու հնարավորությունները: Կոռուպցիայի բարձր մակարդակ ունեցող երկրներին սովորաբար չի հաջողվում նպատակային և արդյունավետ կերպով օգտագործել ներգրավված միջոցները: Մինչև վերջերս ՀՀ կառավարությունը վարկային միջոցները ներգրավում էր արտոնյալ պայմաններով, որոնց կառավարումը մեծ հմտություններ չէր պահանջում: Սակայն հիմա, երբ կառավարությունը միջոցներ է ներգրավում շուկայական պայմաններով, պարտքի վերաբերյալ քաղաքական որոշումների դեպքում զգուշավորությունն ավելորդ լինել չի կարող: Հայաստանը պարտքի սպասարկման հետ կապված դժվարությունների է առերեսել 21-րդ դարի սկզբին, երբ ստիպված էր ՌԴ-ի հետ «Գուլք» պարտքի դիմաց» գործարքի միջոցով մեղմել պարտքի բեռը: Այդ տարիներին պետական պարտքը չէր գերազանցում ՀՆԱ 47 %-ը:

